



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







№ 59

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»

№ 59

Ա. ՏԵՐՁԵԿՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Ա. Ֆ. Խ. Հ.

ԱՆԱՍՆԱՊԱՅԻՆԻ ԹՅՈՒՆԸ

748

ԳՅՈՒՂԱՑՆԵՄՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻՑՈՒՄԸ



ԳԻՐԱ 25 ԿՈՎ

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ—1929

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅ ԵՆ ՏԵՍԵԼ
«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի
ՀԵՏԵՎՑՅԱԼ ԴՐՔԵՐԸ

1. Աւզեցաւցած անօառային տօխառավորի	50 կ.
2. Ա. Շագանաց—Մեր անելիքները (սպառված)	20 շ
3. 2. Փիրումյան յեվ Ա. Մինիսյան—Ինչու ձեռնադրության գործարանում յուղ և շվեյշ. պանիր պատրաստելը (սպառ.)	3 շ
4. 2. Փիրումյան—Խոտարուկմերը և նրանց մշակության յեղանակները (սպառ.)	10 շ
5. Խ. Ավգաւրենյան—Հիմն Հողային Որենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատ. հողոգտագործություն (սպառ.)	40 շ
6. Պ. Հերիմյան.—Թթենու մշակությունը (սպառվ.)	10 շ
7. Պ. Հերիմյան.—Շերտամի վորդը, նրա կերակրելն ու ինամքը	10 շ
8. Խ. Շերիցյան.—Կաթնատնաենության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) (սպառված)	1ռ. 50 շ
9. Կ. Մինիք-Շտենագարյան.—Մխախոտի մշակությունը (սպառված)	20 շ
10. Ա. Ֆրիզովին.—Տասը պատգամ անասնապահին	20 շ
11. Խ. Շերիցյան.—Անհատակմն, թթ կոոպ. կաթնամնատեսություն	10 շ
12. Հ. Զարուբյան.—Բատրակ, կնքիր պալմանագիր (չափածո) (սպառ.)	5 շ
Պումանյան.—Շարքացանը և նրա նշանակութ. 15 շ	
Դերիխյան.—Ինչպես մշակել խաղողի (28 նկարով) (սպառ.)	35 շ
Դի գուգ.՝ Անդրկովկասլան Թերի բանաձեր գյուղացիական հարցի թիվնաբանարանով (սպառված)	15 շ
Եմիսական կուսակցության անդամ Շուշուրգ Պլենումի թագավորի պատճենը	15 շ
Խ. Ռ յաղջյուրավոր անասուն. սպառվ.)	15 շ

636(47.94)

Ե-84 Ա. ՅԵՐՋԻԿՅԱՆ

Հիմայ.

338.1(47.92)

Ա. Ա. Ֆ. Խ. Հ.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵ

ԳՅՈՒՂԱՑՆԵՄՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

A 18997



ՀՈԼԺՈՂԿՈՄԱՏ ՀՐԱՄԱԿԱԳՐ ՔՐՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ - 1929

ՊԵՏՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Դրասեպ. № 2180 (բ.)

Գատվ. № 638

Տիրամ 1200


Ա. Ս. Թ. Խ. Հ.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

(ՀՅԻՆՀ Հողմողկոմ Արամայիս Յերգթելյանի զեկուցումը
Ա.Ս.ՅԻՆՀ խորհուրդների 5-րդ համագումարում)



Ընկերներ,

Նախքան ինձ հանձնարարված զեկուցմանն անցնելը, պիտի ասեմ, վոր ժամանակի սղության պատճառով, յեռ զլուղանտեսական վարկի մասին չեմ խոսելու, նկատի ունենալով, վոր Անդրգյուղբանկի հաշվետվությունը բաժանված ե ընկեր պատգամավորներին:

Յես կանդ կառնեմ միայն անամնապահության և գյուղատնտեսության ինդուստրացման վրա, սակայն մի քանի խոսքով կուզելի անդրադառնալ գյուղատնտեսության ընդհանուր խնդիրներին:

Այսոր ընկ. Նուսելնով իր զեկուցման մեջ ասաց. — «Այն ժամանակ, յերբ Անդրկովկասի խորհրդանացումից հետո մեր արդյունաբերությունը հակայական չափերով ու թափով աճել ու զարգացել ե (առանց Ազնեվիթի, մենք կըրկնապատկել ենք մեր արդյունաբերության արտադրանքը), — սեր գյուղատնտեսության զարգացումը յետ ե մնացել: Գրուղատնտեսության մեջ, միայն գալստավարության ընագագում՝ ըստ տարածության և անամնապահության բընագավառում՝ ըստ անասունների քանակի, մենք հասել ենք մինչպատերազմյան նորմաներին: Սակայն, ինչ վերաբերում ե ե արտադրանքին ու բերքատվությանը, — ապա մենք տակավին չենք հասել նախպատերազմյան նորմաներին: Ի հարկե, այն, ինչ վոր ասաց ընկ. Բունիաթ-Զաղեն, միանգամայն ճիշտ ե: Մենք ստացել ենք սարսափելի վիճակում գտնվող մի ժառանգություն, և այդ ժառանգության սահմաններում ու պարմաններում մենք շատ ենք առաջ գնացել: Բայց ընդհանուր առմամբ թե բերքատվության և թե անամնապահական տնտեսության,

կամ անասնաբուծության արտադրանքի բարձրացման տեսակետից՝ մենք տավավին չենք հասել մինչպատերազմյան նորմաներին։ Անհրաժեշտ ե, վոր գյուղատնտեսության վերելքն ու գարգացումը գնա արագ թափով։ Արդյունաբերության արագ թափը սերառեն շաղկապված ե գյուղատնտեսության հետ։ Յեթե մի կողմից մեր տեխնիքական կուլտուրաների գարգացումը խթան ե հանդիսանալու մեր թեթև արդյունաբերության գարգացման համար, ապա միշտու կողմից՝ անհրաժեշտ ե, վոր մենք գյուղատնտեսության մեջ զարկ տանք սպառողական նշանակություն ունեցող կուլտուրաների գարգացման, վորպեսզի ունենանք եժան սպառողական մթերքներ՝ մեր բանվորներին տալու համար։ Կարծել, թե դրամական մասսայի հավելումով կը լուծվի աշխատավարձի բարձրացման խնդիրը — անհմաստ յենթադրություն ե։ Աշխատավարձի ոեալ բարձրացման համար հիմք պիտի ծառայի գյուղատնտեսական մթերքների եժանացումը։ Ալդ կինք ավելի ելական և մեծ հետևանքներ կտան այն տեսակետից, վոր արդյունաբերության մեջ մենք իրոք կունենանք գների իջեցում։ Ներկայումս գոյություն ունի ճեղքվածք — գյուղատնտեսական սպառողական նշանակություն ունեցող մթերքների գները բարձրանում են։ Ալդ անընական լերկույթ ե, և մենք այն պիտի վերացնենք, վորովհետև, կրկնում եմ, մեր արդյունաբերության գարգացման ըուռն թափը սերտորեն շաղկապված ե մեր գյուղատնտեսության հետ։ Յեթե այդ տեսակետից մոտենալու լինենք մեր նպատակներին, ապա պիտի ասեմ, վոր մեր լերկը և՛ ընական և՛ կլիմայական պայմանները մեզ ընձեռում են հնարավորություններ՝ գարգացնելու գյուղատնտեսական բազմազան կուլտուրաներ։

Յեվ իրոք, սկսած մեր բարձր տեխնիքական, սուբարոպեկ կուլտուրաներից մենք համանում ենք մինչև մեր ալպան գոտիները՝ իրենց անասնապահական տնտեսությամբ։ Սակայն, վորպեսզի մեր ընդհանուր գյուղատնտեսական

սութլան մեջ պարզենք գյուղատնտեսության զանազան ճյուղերի տեսակաբար կշիռը, ապա ամենից առաջ անհրաժեշտ ե ճանաչել մեր տերի տորիայի առանձին հողատեսքերի տեսակաբար կշիռը։ Այդ տեսակետից Անդրկովկասի մակիրենութը վորոշ չափով տարբերվում է Միութլան մյուս շրջաններից։ Մեզ մոտ, Անդրկովկասում անպետք հողերի տարածությունը հավասար է 3,376,000 հեկտարի։ Նշանակում ե, մեր տերի տորիայի 18 տոկոսը անպետք, մշակության համար անհարմար հողեր են։

Մեր ձմերալին և ամարային արոտավայրերի տարածությունը հավասար է 3,440,000 հեկտարի, կամ 18,6 տոկ.-ի, անտառները բռնում են 4,256,000 հեկտար տարածություն։ Մյուս շրջանների հետ համեմատած, մեր վարելահողերի տարածությունն ելքիչ ե—ընդամենը 3,450,000 հեկտար, կամ 19 տոկ.։ Մեր տերի տորիայի զանազան հողատեսքերի այդ փոխհարաբերությունը մեզ առաջադրում ե զանազան խնդիրներ։—

Առաջին և հիմնական խնդիրը—ալդ՝ այն ե, վոր մենք պակասեցնենք մշակության համար անհարմար, անպետք հողերի տոկոսը։ Այդ մի մեծ խնդիր ե, վորը մենք մի կողմից՝ պիտի կատարենք Զրային Տնտեսության գծով և մյուս կողմից՝ հիմնական մելիորատիվ աշխատանքների գծով։

Ահա մի խնդիր, վորի լուծումը մեզ հնարավորություն կտա իրոք մեղմելու ալդ անհամաշափությունը, վոր գոյն-թլուն ունի առանձին հողատեսքերի բաշխման տեսակետից՝ անհարմար հողերի և վարելահողերի տակ ընկած տարածության միջն։ Ալդ ուղղությամբ մենք վորոշ հաջողություններ ունենք։ Մեր հնգամյա պլանը, վոր ձեզ լարդեն զեկուցվեց, հետապնդում է վորոշ նպատակ—մասսամբ արոտավայրերի և մասամբ վարելահողերի վերածելով՝ պակասեցնել մեր անհարմար հողերի տարածությունը։

Եթե մենք կանգ առնենք անասնապահության վրա,

—ապա կտեսնենք, վոր մեր ամարային ու ձմերային արոտավալբերի հսկայական տարածությունները մեզ վոչ միայն հնարավորություն են ընձեռում մեր ժողովրդատնտեսության մեջ պահելու մեր անասնապահության ներկայիս գոլություն ունեցող տեսակարար կշիռը, այլ և զգալիորեն այն բարձրացնելու:

Յեվ յեթե մենք ցանկանանք ծանոթանալ այն տեսակարար կշռի հետ, վոր ընդհանուր գյուղատնտեսության սիստեմում գրավում ե մեր անասնապահական տնտեսությունը,—մենք կունենանք հետեւալ պատկերը: Ամբողջ Անդրկովկասի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը հավասար է 540 միլիոն 181 հազար ռուբլու: Այդ գումարից բուսաբուծության (ростениеводство) արտադրանքի արժեքն է 360 միլիոն 240 հազար ռուբլի, իսկ անասնապահության արտադրանքի արժեքն է 171 միլիոն 938 հազար ռուբլի, այսինքն՝ 31,8 տոկոս:

Վերոհիշյալ գումարը, ըստ առանձին հանրապետությունների բաշխելով՝ կստանանք հետեւալ գումարները:—

Խ. Աղբբեշանի գյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր գումարը կազմում է 207 միլիոն ռուբլի (հարյուր հազարները յես դուրս եմ գցում), վորից բուսաբուծության արտադրանքի արժեքը՝ կազմում է 147 միլիոն ռուբլի, իսկ անասնապահությանը 28 միլիոն ռուբլի, կամ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի՝ 59 միլիոն ռուբլի, կամ 28,9 տոկոս:

Խ. Հայտատանի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը կազմում է 78 միլիոն ռուբլի, բուսաբուծության արտադրանքը՝ կազմում է 50 միլիոն, ռուբլի իսկ անասնապահությանը՝ 28 միլիոն ռուբլի, կամ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի՝ 36 տոկոսը:

Խ. Վրաստանի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը կազմում է 254 միլիոն ռուբլի, ըստ վորում բուսաբուծության արտադրանքի արժեքն է 170 միլիոն ռուբլի, իսկ անասնապահությանը՝ 83 միլիոն ռուբլի, կամ

գլուղատնտեսական ընդհանուր արտադրանքի 23 տոկոսը:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր ամբողջ ժողովրդատնտեսության մեջ մեր անասնապահական տնտեսությունն իր պատկառելի տեղն ունի: Յեթե մեր անասնապահությունը քննելու լինենք իր հետագա հեռանկարների տեսակետից,—ապա կհամոզվենք, վոր նա անշեղորեն աճում ու զարգանում եւ: Վերջին տարիների թվական տըվյալներն ապացուցում են, վոր մեր գլուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ անասնապահությունը, բատուկոսացին հարաբերության՝ աճում ու սեծանում եւ: Ալպես, Խ. Աղբբեջանում անասնապահության արտադրանքը, գլուղատնտ. ընդհանուր արտադրանքի նկատմաբ՝ 1926թ. կազմում եր 29 տոկ., 1926—27թ.՝ 29,2 տոկոս և 1927—28թ.՝ 31,8 տոկ.: Ալպիսով, Դուք տեսնում եք արդեն, վոր գլուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ անասնապահության արտադրանքի տեսակարար կշիռը բարձրանում եւ: Սակայն այստեղ յես պիտի հետեյալն ասեմ: —անասնապահության զարգացումը սերտորեն կապված ե կերի խնդրի հետ: Ի՞նչպես ե կազմակերպված և ի՞նչ դրության մեջ ե գտնվում կերի խնդիրը մեղ մոտ, —ահա այն եյական հարցը, վորից և զիսավորապես կախված ե մեր անասնապահկան տնտեսության զարգացումը, վորը, կրկնում եմ, մեր գլուղատնտեսության արտադրանքի մեջ պիտի գրավի ել ավելի պատկառելի տեղ, քան նա ունի այսոր: Յեթե թվական տվյալներով պարզելու լինենք այս խնդիրը—մենք կունենաք հետևկալ պատկերը: —Յես արդեն ասսցի, վոր մեր ամարալին ու ձմերալին արոտավայրերի ընդհանուր տարածությունը 3,440 հազար հեկտար եւ:

Արոտավայրերի տարածությունն ըստ հանրապետությունների հետեւալ պատկերն ե ներկայացնում: —

Աղյուսակ № 1.

Հանրապետություններ	Ամառային		Ձմեռային	
	Հազար հեկտար	%	Հազար հեկտար	%
Խ. Ազգային .	393,6	28,6	1848,4	76,0
Խ. Հայաստան .	556,9	33,4	1743	9,8
Խ. Վրաստան .	717,2	43,0	250,3	14,2
Ընդամենը .	1667,7	100,0	1773,0	100,0

Զնայելով, վոր մենք ունենք այդքան մեծ տարածություններով ամարալին ու ձմերալին արոտավայրեր, վորըն բստ յերևուզին մեծ զարկ պիտի տա մեր անասնապահության զարգացման, սակայն, պիտի նկատեմ, վոր արոտավայրերի արդ տարածության համեմատությամբ մենք խոտհարքներ ունենք ընդամենը 5,3 տոկոս: Մեր դաշտավարական տնտեսության մեջ բացակայում ե կանոնավոր ցանքաշրջանառությունը. այստեղ խոտացանությունն ու արմատապտուղների մշակությունը կամ շատ չնշին տեղ ե բռնում, կամ բոլորովին բացակայում ե: Այդ աննորմալ յերևույթը մեր անասնապահության մեջ, զվարապես մեր անասնապահական տնտեսության մեջ՝ ըստեղծում ե եքստենսիվ անտեսություն:

Այս հանգամանքը բացատրվում է նրանով, վոր մեր անասնապահական տնտեսության մեջ մենք տակավին ունենք այնպիսի եքստենսիվ մի ձև, ինչպիսին քոչվորական տնտեսությունն ե: Իսկ քոչվորական տնտեսությունը, վորին յես կանդրադառնամ հետո, վոչ միայն խոչնդում ե հանդիսանում անասնապահական տնտեսության, այլ նաև մի շարք ալլ կուլտուրաների: Դրա վրա յես կանգ կառնեմ: Սակայն մի քանի թվեր, վոր յես պիտի բերեմ ընկ. Բունիաթ-Զադեյի փալլուն ճառից հետո, ձեզ պիտի հի-

ասթափություն պատճառեն այն տեսակետից, վոր ընկ-
բունիաթ Զադեն այստեղ նկարագրեց այն լավագույն հե-
ռանկարները, վորպիսիք մենք ունենալու լինք հետագա-
յում։ Յես կցանկանալի կանդ առնել մի քանի մոմենտնե-
րի վրա և դրսնորել մեր տնտեսության մեջ յեղած բացերը։
Վորքան շատ մենք բացահայտենք մեր բացերն, այնքան
հեշտ կլինի նրանց վերացնելն ու արմատախիլ անելը։ Մեզ՝
բալլենիկներիս համար նվաճումները նորություն չեն, Յեզկ
վորպեսզի մենք նորանոր նվաճումներ ունենանք, անհրա-
ժեշտ ե, վոր մենք վերացնենք մեր տնտեսության յետա-
մաց ձևերը։

Անցնելով մեր անամնապահական տնտեսության կերի հարցին, պիտի ասեմ, վոր մենք, Միության մյուս շրջան-
ների համեմատությամբ, յերկու անգամ ավելի քիչ կեր ունենք, քան անասուն։ Անամնապահական տնտեսության տեսակետից այդ յերկութը խոշոր նշանակություն ունի։ Այս առաջին մոմենտը, վորի վրա յես կցանկանալի կանդ առնել։ Այստեղից հետևում ե այն դրությունը, վոր մենք ունենք արտադրանքի բնագավառում։

Մասի ինչպիսի ապրանքալին յելք ունենք մենք։ Այդ տեսակետից Միության մյուս շրջանների համեմատությունը տալիս է հետեւյալ պատկերը։—

Աղյուսակ № 2.

Հանրապետություններ	Մեկ դրույթ ու սունից ստացված միաը—ցենտներ.		Կովկ տարեկան միջին կերը ցենտներ.	Մանոթություն
	Ց և զ	Կ ո զ		
Հյուսիս-Կովկաս	2,4	1,6	8,9	Ամբողջ Միության մեջ ամենանվազ արտադր-քանքն ունի Ա. Ան-դրկովկասի խոշոր յեղ-ջերավոր անասունը։
Խ. Ռէպայնա . .	2,9	1,9	10,3	
Խ. Միություն . .	2,2	1,4	9,3	
Խ. Անդրկովկաս . .	1,38	0,95	5,2	

Ցեթե մենք անասունների թվի տեսակետից համեմատելու լինենք 1913 և 1927 թ. թ. (մինչպատերազմյան թվականը՝ մեր նախավերջին տարվա հետ, վորովհետև գլուղատնտեսական վիճակագրությունը մեզ մոտ կատարվել է 1927 թ.), ապա կտեսնենք. —

Աղյուսակ № 3.

Մինչպատերազմյան նորմաների համեմատությամբ	Ն ա ն ո թ ու թ յ ո ւ ն
Զի	90,5 %
Խոշոր յեղջ. անասուն .	94,3 >
Գոմեզ	91,8 >
Վոշխաբ	97,2 >
Այծ	110,2 >
Խոզ	106,1 >

Թվական տվյալներ՝ ըստ հանրապետությունների յես շեմ բերում, վորովհետև իմ տրամադրության տակ քիչ ժամանակ ե մնացել: Ցես ցանկանում եմ այստեղ նշել հետեւյալ բնորոշ փաստը. — այծերը մեզ մոտ աճել են 110 տոկոսով. Սա հասարակ յերեսույթ չե, սա պատահականություն չե:

Բանն այն ե, վոր մեր արոտավայրերը աստիճանաբար աղբատանում, վատանում են և վորոշ շրջաններ, վորոնք առաջներում ծառալում ելին վորպես լավ արոտավայրեր մեր կովերի համար, — այժմ դարձել են միայն այծերի համար պիտանի արոտավայրեր: Վորպեսզի ալդ կատաստրոֆիկ դրությունն իր ամբողջությամբ պատկերացրենք, յես նորից պիտի դառնամ կերի խնդրին, վորովհետև մեր անամնապահական տնտեսության հիմական զարգացման տվյալը հանդիսանում ե կերի բազայի ընդարձա-

կումը։ Արոտավայրերի վերաբերմամբ մեր կատարած հետազոտությունը պարզել է մի սարսափելի պատկեր։—Պրոֆ. Դիմիտրիկը, վոր հետազոտել է Խ. Վրաստանի և Խ. Հայաստանի արոտավայրերը, հայտնել է, վոր յեթե հետագայում ել մենք շարունակենք ալդպիսի թալանչիական ձեռվ շահագործել մեր արոտավայրերը, —ապա 10 տարուց հետո նրանցից վոչինչ չի մնաւ։

Մեր արոտավայրերի ծանրաբեռնվածությունը հետեւյան ե. - Խ. Աղբբեջանում յուրաքանչյուր 100 հեկտար տարածության գալիս ե 386 գլուխ խոշոր յեղջերավոր անասուն (մանր անասունները վեր են ածված խոշոր յեղջերավորների), Խ. Հալաստանում՝ 293 խոշոր յեղջերավոր անասուն և Խ. Վրաստանում՝ 219 խոշոր յեղջերավոր անասուն։ Սրանք մեր արոտավայրերի համար սարսափելի թվեր են, և յեթե ալդ ուղղությամբ ձեռք չառնվեն մի շարք համապատասխան միջոցներ, —ապա, մենք, վոր ալժմունենք հարուստ արոտավայրեր, արոտավայրեր, վորոնք վորակի տեսակետից հանդիսանում են կերի լավագույն բազաներ, կարող ենք իրոք նրանցից զրկվել։ Դրա համար ել մեր առաջ ծառացած ե, թեկուզ որենսդրական կարգով, կարգավորելու մեր արոտավայրերի բեռնվածության խնդիրը։

Այստեղ, մեր հնգամյա պլանում մենք խոսեցինք մեր ունենալիք նվաճումների մասին։ Սակայն, յեթե մենք չը պահպանենք մեր արոտավայրերը, թեկուզ այն դրությամբ, ինչպես նրանք ներկայումս կան, —ապա մեր անասնաբուծական տնտեսությանը կատաստրոֆա յե սպառնաւմ։

Այսպիսով, առաջին հարցը, վոր մենք պիտի լուծենք, —ալդ որենսդրական կարգով և բալշեկելյան վճռականությամբ արոտավայրերի բեռնվածության խնդիրն ե հանդիսանում, վորովհետեւ այն մասը, վոր մենք կրում ենք ամեն տարի, կինի հսկայական և կորցրածը մենք այնս հետագայում վերադարձնել չենք կարող։ Կարծեմ, հենց

այսոր, ընկ. Հուսեյնովը և մասամբ նաև ընկ. Բուհիաթ-
Զադեն իրենց զեկուցումների մեջ հայտնեցին, վոր անաս-
նապահության արտադրանքի տեսակետից, մենք նշանա-
կալից չափերով յետենք մնում մինչպատերազման նոր-
մաներից: Ի՞նչու յենք յետ մնում: Չե վոր մենք ունենք
անասունների նույն քանակը և արոտավայրերի նույն
տարածությունը, ինչ վոր առաջ: Ի՞նչում ե բանը: Չե
վոր անասնապահական հիմնական գավառներում մենք ա-
նասունների խնամքի և աղբյիկուլտուր ձեռնարկում-
ների կիրառման տեսակետից՝ դեռ առաջ ենք գնացել, քան
արդպիսիք գոյություն են ունեցել առաջներում: Նշանա-
կում ե կան այլ պատճառներ: Պատճառն այն ե, վոր ա-
րոտավայրերն աստիճանաբար աղքատանում ու վատանում
են և մեր կերի բազան չի մեծանում (ձայներ՝ նիշ ե):
Յեկ այդ տեսակետից յես պիտի մատնանշեմ, վոր մեր
հնգամյակի հիմնական թերություններից մեկն ել այն ե, վոր
մենք, մեր արոտային տնտեսության վրա քիչ ուշադրու-
թյուն ենք դարձնում և նրա բարելավման համար քիչ մի-
ջոցներ արամադրում: Յերկրորդ հարցը, վոր կանգնած ե
մեր առաջ,—այդ՝ մեր արոտավայրերում լայն մասշտաբով
մելիորատիվ աշխատանքներ կիրառեն ե. - ճանապարհներ
անցկացնելը, արոտավայրերի փոցխելը, ջրամբարներ կա-
ռուցել, մոլախոտերը հեռացնելը և այլն: Ահա մեր արո-
տային տնտեսությունը փրկելու հիմնական հարցերից մեկը,
վորը մենք պիտի լուծենք:

Սակայն, ընկերներ, մեր արոտային տնտեսությունն
ունի մի այլ ավելի մեծագույն թշնամի—այդ թշրամին՝
քոչվորական տնտեսությունն ե: Վերջինս վոչ միայն չարիք
ե հանդիսանում մեր անասնապահական տնտեսության
համար, այլև ընդհանրապես չարիք ե մեր դաշտավին տնտե-
սության համար:

Յորբ ընկ. Հուսեյնովը զեկուցում եր դաշտավայրի
բերքատվության մասին, նա ասաց, վոր Անդրկովկասում

մենք բամբակի բերքատվության տեսակետից տակավին չենք հասել մինչպատերազմյան չափերին։ Միջին հաշվով, մեկ հեկտարից մենք ստանում ենք 39 փութ։ Յեթե այս թիվը՝ մենք ըստ գավառների և ըստ շրջանների քննելու լինենք, — ապա կունենանք ավելի նվազ թիվ՝ 25—28 փ. մի հեկտարից։ Դրանք հենց այն գավառներն ու շրջաններն են, վորտեղից լենում ե քոչվոր ազգաբնակությունը։ Դաշտավայրի շրջանների համար այդ քոչող տըստեսությունները հանդիսանում են այն տարրերը, վորոնք և կասեցնում են այդ շրջանների տնտեսության դարձացումը։ Յեթե մենք ցանկանում ենք կանոնավոր ցանքաշրջանառություն կիրառել, — ապա պիտի հեռացնենք, վերացնենք այդ խոչնդուրը, վորովհետև տեխնիքական կուլտուրաների ընդհարձակումը անհրաժեշտորեն պահանջում ե նստակյաց անտեսություն։

Քոչվորական տնտեսությունը վոչ միայն այդ տեսակետից ե չարիք հանդիսանում։ Մենք մի փոքրիկ փորձ արինք։ Հայաստանի բամբակագործական շրջաններում համարևա վոչնչացրինք քոչվորությունը և բամբակի բերքը, միջին հաշվով, մի հեկտարից հասավ 64 փթի։ մինչդեռ, այն շրջաններում, վորտեղից տակավին շարունակում են քոչել — բամբակի բերքը 38—40 փթից չի անցնում։ Պարզ ե. բամբակը գյուղացուց պահանջում ե մշտական ու անմիջական աշխատանք. քոչվորությունը՝ կործանում ե այդ կուլտուրան քոչվորական վայրերում։

Առաջին մոմենտը, վորի վրա յես ցանկանում ելի մատնանշել։

Յերկրորդ մոմենտ. — Քոչվորական տնտեսությունը գասակարգային տեսակետից նույնիսկ հանդիսանում ե ռեգրեսիվ ֆակտոր. մինչդեռ մեր կուսակցությունը մեզ առաջարիել ե մեր անտեսությունը, կոռպերացման ու կոլեկտիվիզացիայի միջոցով, ուղղել դեպի սոցիալիստական հունը։

Առահասարակ, գլուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրը կարող ե գնալ յերկու ուղղութլամբ. — կամ՝ կապիտալիստական ուղիով, վորի տարրերը հանդիսանում են կուլակները, վորը սակայն մեր ուղին չե, կամ՝ սոցիալիստական ուղիով, — այսինքն կոլեկտիվիզացիալի և կոռպերացիալի ուղիով:

Քոչվորական անտեսությունը խոշոր խոչնդուած ե հանդիսանում և վնչ մի հնարավորություն չի տալիս անասնավահական տնտեսությունը կոռպերացման յենթարկելու, նրան կոլտնտեսութայն հունի մեջ առնելու: Յեթե մենք նրան նայելու լինենք դասակարգային տեսակետից, ապա կտեսնենք, վոր այդ տեսակետից ել նա վորոշակի խոչընդուած ե հանդիսանում, Յեթե քննելու լինենք քոչվորների սոցիալական կազմը, կտեսնենք, վոր գլխավրրապես քոչում են կուլակները: Ընկ. Դադաշն այդ ուղղութլամբ կատարել ե հետազոտություն և խոստանում ե այդ հետազոտության նյութերը մոտնկ ապագայում հրապարակել: Դժբախտաբար իմ տրամադրության տակ չկան այդ նյութերը, սակայն յես տվյալներ ունեմ, վորոնք հաստատում են, վոր քոչվորների 70 տոկոսը, մասնավանդ առանձին շրջաններում — կուլակներ են: Յեկ այս պայմաններում դասակարգային գիծ կիրառել, կամ կուլակի վրա ճնշում դործ դնել — միանգամայն անհնարին ե: Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք, վոր ալստեղ կան սակավահող ու հողագուրկ գլուղացիներ, վորոնք իրենց տնտեսությունն ստեղծել չեն կարողանում: Ահա, ինչպես ե դըրվում այս հարցը դասակարգային տեսակետից: Կան շըրջաններ, վորտեղ առանձին տնտեսություններ ունեն սինչե 8 հազար գլուխ անասուն: Յեկ այդ գեռ այն դեպքում, լեռը մենք հարկային քաղաքականությամբ և հողաշինարարության գծով բավականաչափ ուժասպառ ենք արել կուլակին, խելով նրա հողաբաժինները և տրամադրելով սակավագոր գլուղացիության: Այսպիսով և այս տեսակետից

մենք ունենք միանգամայն անթու լատրելի տնտեսության ձևեր, վորոնք հողային հարաբերությունների տեսակետից այնպես չեն լինթարկվում մեր կողմից կուլակի վրա կատարած հարձակման, ինչպես այդ թելաղբում ե մեր կուսակցությունը:

Բացի դրանից, այդ տնտեսության մեջ կա նաև 4-րդ ելեմենտը՝ այդ հենց այն տարրն ե, վոր խանգարում ե քոչվորների կուլտուրական զարգացմանը — դա ընտանեկան կենցաղի հին ձևն ե, վորտեղ ընտանիքի գլուխը հանդիսանում ե ամբողջ ընտանիքի դիկտատորը և մեզ չի հաջողվում կիրառել մեր ծրագիրը Այս տեսասկետից լինելով, յես կարծում եմ, վեր մեր հերթական խնդիրը պիտի լինի իրագործել Անդրկենտգործկոմի 2-րդ գումարման 2-րդ նստաշրջանի հետեւալ վորոշումը: —

«Հանձնարարել Անդրկենտգործկոմի նախագահության, անհապաղ ձեռնամուխ լինել լուծելու և կարգավորելու արոտավայրերի հարցը՝ հետեւալ հրահանգների հիման վրա: —

1. Արոտավայրերի հարցը քննել, կապելով ալդապիսին ինչպես հողային ընդհանուր հարցի հետ — անսամնապահությունը՝ հողագործության հետ — նույնպես և մեր եկոնոմիկայի այդ հիմնական ճյուղերի հեռանկարային զարգացման հետ:

2. Հրաժարվել հին, մինչ հոկտեմբերյան անասնապահության կառուցվածքի մեխանիքական վերականգնումից և այն վերակազմել լերկրի տնտեսական-աշխարհագրական պարմանների, ժամանակակից կուլտոր-տեխնիքական պահանջների և մեր սոցիալիստական նպատակների համաձայն:

3. Նպատակ դնել աստիճանաբար քոչվորական և կիսաքոչվորական անասնապահությունից անցնելու կուլտուրական հողագործության՝ ձմերային արոտավայրերում և ալպան տնտեսության՝ ամաբալին արոտավայրերում, ըստ վ. ըստ մաքսիմալ աջակցություն ցուց տալ անգամ կությանը գյուղատնտեսության նոր ձևերին անցնելու:

Անասնապահություն-2



4. Հանձնարարել ԱԾՖԽՀ Պետպլանին կազմելու հեռանկարային ծրագիր՝ քոչվորական և կիսաբռյալ վորական անասնապահությունից հողագործության և ալպյան տընտեսության անցնելու — դաշտավայր՝ և՛ գյուղատնտեսության շրջանացման, վոռոգման, ճահճների ցամաքեցման ու ջրամատակարարման, իսկ ալպյան գոտում՝ խոտացանության ու ցեղական անասնապահության հիմունքներով։

5. Հանձնարարել Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Հողային Հանձնաժողովին ղեկավարելու Հանրապետական Հողագործության Ժողովրդական Կոմիսարիաների հրահանգներով այդ նախագծի համար կատարվող նախապատրաստական աշխատանքները, ստուգել ալդ աշխատանքները և հսկել, վոր Հանրապետական Հողագործության Ժողովրդական Կոմիսարիաները ճշտությամբ կիրառեն մշակված ծրագիրը։

Անդրկենտգործկոմն ալդ առթիվ իր վորոշումն ունի, սակայն այդ ուղղությամբ մենք վոչ մի քայլ չենք արել Ի՞նչ քայլեր պիտի անելինք։ Իհարկե, վաչ վարչական։ Այդ պարզ եւ Այստեղ անհրաժեշտ են մի շարք տնտեսական ձեռնորկություններ, վորպեսզի մենք կարողանանք իրոք վերացնել քոչվորական տնտեսությունը։ Վորհնք են այդ տնտեսական ձեռնորկությունները։ Յես պիտի ասեմ, վոր մեր դաշտավայրում մենք հսկալական աշխատանք ենք տանում, սակայն տնտեսական տեսակետից վոչինչ չենք անում, վորպեսզի քոչող ազգաբնակության համար կուլտուրական պարմաններ ստեղծենք, վորպեսզի նա հոծքագմությամբ չքոչի և նոմադական տնտեսություն չվարի։ Խ. Հայաստանում և Խ. Աղրքեջանում դուք կհանդիպեր շատ գյուղերի, վորտեղ խմելու առողջարար ջուր չկա, մինչդեռ մենք մեծամեծ ջրանցքներ կառուցելու համար միլիոններ ենք ծախսում։ Մենք փող չունենք, վոր մեր գյուղացիության համար սաեղծենք կենցաղի առողջ ու նորմալ պայմաններ, վորպեսզի նա իր տեղում, իր հողի

վրա նստած իրոք կարողանա զբաղվել բարձր տեխնիքական կուլտուրաների մշակությամբ, այնպիսի կուլտուրաների, վորոնք այդ հողում կարող են աճել:

Դառնանք կենցաղային խնդիրներին: Այդ ուղղությամբ մենք վոչ մի միջոցի չենք ձեռնարկում: Մեր հիմնական նպատակն ե վերացնել քոչվորական տնտեսությունը, սակայն վոչ դեկրետով (դրանից բան չի դուրս գա) այլ մի շարք տնտեսական ձեռնարկումներ կիրառելով, վորպիսիք կնպաստեն քոչվորական տնտեսության վերանանալուն, վորովհետեւ, առում եմ, այդ են պահանջում դաշտավայրի բերքի բարձրացումը, կոռակերացման շահը և անամնապահական տնտեսության սոցիալիստական հունի մեջ դնելը:

Ընկերներ, խոսելով անտանապահական տնտեսության մասին, յես, գլխավորապես, կանգ առա խոշոր յեղերավոր անասունների վրա: Մեր գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ, խոշոր յեղերավոր անասուններից հետո վոչխարարուծությունը լերկորդ տեղն է քոնում: Յես չեմ ուզում ձեր ուշադրությունը ծանրաբեռնել թվերով, սակայն պիտի ասեմ, վոր այդ ճյուղում ել մենք նշանակալից չափերով: յետ ենք մնացել Յեթե մեր վոչխարի մսի ապրանքային լելքը համեմատելու լինենք մեր Միության այլ շրջանների, ինարկե՛ միատիպ վոչխարի մսի ապրանքային լելքի հետ, —կտեսնենք, վոր այն զգալիորեն ցածր ե: Յեթե մենք վերցնելու լինենք բըրդի ապրանքային լելքը, ապա այստեղ ել նույն լերեւութը կտեսնենք, վոր այդ ապրանքային լելքը շատ ավելի քիչ ե, քան մեր Միության այլ շրջաններում: Սակայն, յես պիտի ասեմ, վոր մեր վոչխարարուծական տնտեսությունն ունի մի շարք խոշոր թերություններ: Այդ թերություններն այն ե, վոր վոչխարարուծական տնտեսությունը չունի բավականաչափ տարածություն, ալսինքն՝ այն չափով, վորպիսին նա ուներ առաջ: Այդ տեսակետից, մա-

նավանդ Վրաստանի վոչխարաբուծությունը մեծ կարիք ե զգում։ Այն տվյալները, վոր լերեկ ինձ հաղորդեց Վրաստանի ընկ. Հողժողկոմը, թե ձմբան ընթացքում Վրաստանում սատկել ե 100 հազար գլուխ վոչխար, և այդ այն պատճառով, վոր նրանք չունեն ձմերալին արոտավալրիր։ Պիտիասեմ, վոր ամարալին արոտավալրերի հարցն ել ալսաեղ այնքան բարեհաջող վիճակում չի գտնվում։ Ընկերներ, սրանք որվա հարցեր են, վորոնց մենք պիտի լուծենք։ Այս տեսակերտից ի՞նչ ե յենթադրում մեր հնգամյակը և ի՞նչպիսին կլինի մեր արտադրանքը հնգամյակի վերջինու հնգամյակի վերջին մեր անսասնապահության ընդհանուր արտադրանքի աճումը հավասար կլինի 64°/₀-ի։ Մյսպիսով, ընդհանուր արտադրանքը 172 միլիոն ռուբլու փոխարեն, կարտահայտվի 282 միլիոն ռուբլով։ Ապրանքալին մասը 64 միլիոն ռուբլու փոխարեն կարտահայտվի 142 միլիոն ռուբլով, այսինքն՝ կաճի 124°/₀-ով։ Մենք կարող կլինենք ալդ արտադրանք ել ավելի մեծացնել, յեթե մեզ հաջողվի մեր անսասնապահական տնտեսություն կերի բազան մեծացնել այնպես, վոր նա համապատասխանի այդ տնտեսության աճման։ Արոտավալրերի մասին յես արդեն ասացի, սակայն պիտի ասեմ նաև, վոր հիմնական ու զըլխավոր խնդիրը, բացի արոտավալրերի մելիորացիալից, բացի այն հարցերից, վորոնց մասին յես ձեզ զեկուցեցի, —այն ե նաև, վոր մենք կերի բազան փոխանցենք մեր դաշտավարական տնտեսության մեջ. — այսինքն՝ խորացնենք ցանքաշրջանառությունը և խոտացանությունն ու արմատապտուղների մշակությունը կատարենք այն չափով, ինչ չափով այդ պահանջում ե ցանքաշրջանառությունը, իսկ ցանքաշրջանառության պահանջը, նրա համեմատությամբ, ինչվոր մենք ունենք այժմ — հսկայական ե, մի պահան, վոր մեզ, կերի մեծ բազա ստեղծելու տեսակետից՝ կընձեռի հսկայական հնարավորություններ։

Ցերկորդ հանգամանքը, վորի վրա յես կուղեյի մատ-

Նանշել ալդ այն ե, վոր շնորհիվ մեր քոչվորական տընտեսութիւն, վորը համատարած յերկուլիթ ե թե Հայաստանում, թե Աղբքեջանում և թե Վրաստանում,—մենք ունենք արոտավայրերի հսկայական տարածութիւններ, վորոնք ըստ ելութիւն վոչ թե արոտավայրեր են, այլ խոտհարքներ։ Անգամ մոտավոր հաշվով կարելի յե ասել, վոր Հայաստանի արոտավայրերից 400,000 հեկտար մենք կարող ենք դարձնել լավ խոտհարքներ։ Իսկ յիթե այդ 400,000 հեկտարը վերածենք խոտհարքի—անգամ իր ամենացածր բերքատվութիւնը, վորպիսին մենք ունենք—հեկտարից 50 փութ, ապա հաշվեք, թե ինչպիսի խոշոր չափով կմեծանա ձմերալին մեր կերի բազան։ Այս աշխատանքը պիտի կտարել թե Հայաստանում, թե Վրաստանում և թե Աղբքեջանում։

Վորպեսզի իմ զեկուցման այն մասը, վոր նվիրված ե անասնապահության խնդիրներին յես սպառեմ, պիտի կանգ առնեմ նաև անասնաբուժության վրա, վորը մեր անասնապահութիւն մեջ այնքան խոշոր դեր ե խաղում։

Ընկերներ, դուք գիտենք, վոր մենք գտնվում ենք Արեվելքի սահմանի վրա, և մեր անասունները յենթակա յեն այնպիսի հիվանդությունների, վորոնք մեր անասնապահական տնտեսութիւնը հսկայական ֆնաս են պատճառում։ Խոշոր յեղջերավոր անասունների ժամատիտը, պիրոպլամոզը, սիրիրախտը և մի շարք ալի հիվանդություններ, վորոնք մեր Միութիւն ալլ շրջանների համար հատուկ յերկութիւններ չեն։ Ժանտախտը միայն վերջին ժամանակներս ե մուտք գործել Հյուսիսային Կովկաս և Դաղսաւան։ Մինչև ալժմ մեր Միությունը, բացառությամբ մեզնից և թուրքեստանից, ազատ եր ալդ հիվանդութիւններից։ Այդ հիվանդությունները, վորոնցից մի քանիսը յես թվեցի, իրոք խոշոր չարիք են հանդիսանում մեր անասնապահական տնտեսութիւն համար։

Այդ ուղղությամբ, վերջին յերկու տարում, մեր Ֆե-

գերացիալի սահմաններում մենք ահազին աշխատանք ենք կատարել: Վորպեսզի փրկենք թե մեր և թե համամիութենական տնտեսությունը, մենք ձեռնարկեցինք մեր անասունների համատարած սրսկման. յեկող տարի մենք կավարտենք ալդ աշխատանքը և մեր անասուններին այդ հիվանդություններից միանգամայն կապահովենք: Սակայն մեր անասնաբուժական գործի հիմնական նպատակն այն չե, վորպեսզի հիվանդության ժամանակ ոգնության հասնի ու անասուններին բժշկի, այլև նա պիտի ձեռնարկի պրոֆիլակտիկ միջոցների — հիվանդությունները կանխելուն:

Անասնաբուժության նպատակը վոչ միայն հիվանդությունների բժշկելն ե, այլ արդավիսիք կանխելն և սանիտարական պայմաններ ստեղծելն ե: Անասնապահության մեջ, բացի կերի հարցից, խոշոր նշանակություն ունեն նաև հարմարավոր շենքերը: Մեր անասնապահական տնտեսությունը հարմարավոր շենքերի տեսակետից գտնվում ե սարսափելի պայմաններում, իսկ այդ հանգամանքը անդրադառնում ե արտադրանքի վրա: Այստեղ մեզ ոգնության պիտի գտ անասնաբուժությունը:

Այս ասպարիֆում մենք այժմ նվաճումներ ունենք: Առաջներում մենք բժիշկների կոնտինգենտ չունելինք, վորպեսզի սպասարկեր մեր անասնապահական տնտեսությանը, և յեթե ունելինք ել մի քանի մասնագետներ, ապա նրանք ել ծանօթ չլինելով տեղական լեզուներին, անկարող ելին համապատասխան կերպով ոգտակար լինել գյուղացիության: Ալդ տեսակետից մենք խոշոր նվաճում ենք համարում Անդրկովկասում Անասնաբուժական Խնստիտուտ ունենալը, վորը մեզ կտա տեղական լեզուներին տիրապետող բժիշկների կազմը, վորոնք և կարող կլինեն նպատակահարմար կերպով ու լիովին սպասարկել տեղական ազգաբնակությանը:

Բացի դրանից, հիմնված են մի շարք գիտական հիմ-

նարկներ՝ ուսումնասիրելու այն հիվանդությունները, վորոնք տարածված են մեզ մոտ և մուս շրջաններում չըկան։ Այդ տեսակետից մենք հսկայական աշխատանք ունենք կատարելու. վորպիսին և պիտի կատարենք։ Մենք յենթագրում ենք, վոր այս հնդամյակի լնթացքում, մենք արմատախիլ կանենք այն լուրահատուկ հիվանդությունները, վորպիսիք գոյություն ունեն մեր անամնապահական տնտեսության մեջ։

Այժմ թույլ թվեք ինձ անցնել գյուղատնտեսության ինդուստրացման խնդրին։

Անդրկովկասի գյուղատնտեսության հիմնական հատկանիշը՝ բնական պայմանների խիստ աչքի ընկնող բազմազանությունն է։

Արդյունաբերության, ինչպես և հաղորդակցության ճանապարհների անբավարար զարգացած լինելը, վորով պարմանավորվում ե նաև շուկալի թույլ ազդեցությունը, — առաջ, պայմաններ, վորոնց հետևանքով մեր գյուղացիական տնտեսությունը խիստ ցածր տեխնիքական բազայով՝ կրում կիսանատուրալ տնտեսության բնույթ։

Անդրկովկասի լեռնալին մակերեսույթի և կլիմայական պայմանների շնորհիվ նրա հողերի մեծ տոկոսը անպետք են, (3,376,9 հազար հեկտար, կամ ամբողջ հողերի 18,3⁰/₀ ը): Խոշոր տարածություն են ըոնում ամառային ու ձմեռային արոտավայրերը (3,440,5 հազար հեկտար, կամ 18,6⁰/₀), ինչպես նաև անտառները (3,547,0 հազար հեկտար, կամ 19,10⁰/₀)։

Անտառներով առավելապես հարուստ ե Վրաստանը և առանձնապես աղքատ և Հայաստանը, սրանով ել բացատրվում ե Աւդրկովկասի չոր, կոնտինենտալ կլիմայական պայմանները։

Սև ծովից մինչև Կասպից ծովը, Քուռի և Արաքսի հովիտներից մինչև Ախալցխայի, Մոռվդաղի, Արագածի և Մտեփանավանի ու Վարանցովկալի միջև ընկած լեռնա-

շղթան և այլն, մենք հանդիպում ենք սկսած սուբարոպիկ բուսականությունից մինչև ալպյան բուսականության տեսակներին և հետո՝ տորֆի և տունդրային շերտերի:

Հողային-կլիմայական պայմանների բազմազանության հետևանք ե ուղղաձիգ զոնալականությունը, վորնիր հերթին պայմանավորում ե նաև ֆեղերացիալի գյուղատնտեսական կուլտուրաների բազմազանությունը:

Անդրկովկասում, բնական և տնտեսական պայմանների ամբողջությունն նկատի ունենալով, կարելի լե նըշել գյուղատնտեսական հետոյալ շրջանները. —

1. Դաշտային արդյունաբերական կուլտուրաների գոտի (բամբակագործություն, ծխախոտագործություն, կենափ և քունջութ):

2. Ալգեգործություն և գինեգործություն՝ դաշտավայրում, տեղատեղ նաև սիջին (Հայաստան, Վրաստան) գոտում:

3. Պտղաբուծական և բանջարաբուծական շրջան— գլխավոր հացանատիկային տնտեսության հետ միասին:

4. Հացանատիկային տնտեսության շրջան— վորպես ոժանդակ տնտեսություն ունենալով նաև պտղաբուծությունը (Հայաստան, Աղբքեջան), կամ սուբտրոպիկ կուլտուրաների և անամնապահության փոքրիկ ճյուղերը (թռչնաբուծություն, շերամապահություն, խոզաբուծություն):

5. Լեռնային գոտի, ուր իշխող պիտի հանդիսանաանամնապահությունը և հացանատիկային ոժանդակ տնտեսությունը՝ հիմք ունենալով ցանովի խստերի տարածությունը (խոտհարք և արոտատեղի), վոր Անդրկովկասի լեռնային պայմանների շնորհիվ ընդարձակ տարածություններ ե գրավում և իր կնիքը գնում յերեք հանրապետությունների գյուղատնտեսության վրա և դրանով ել պայմանավորում քաշվորական ու կիսաքոչվորական տիպի տնտեսությունների գոյությունը:

Խ. Միության ամբողջ գյուղատնտեսության վերա-

Կառուցման ընդհանուր նպատակն ըի համաձայն Անդրբ-
կովկասի գլուղատնտեսությանը շնորհիվ նրա պալման-
ների—վերապահված ե արդյունաբերական հումուրիթի բա-
զալի դերը՝ (սուբտրոպիկ ու տեխնիքական կուլտու-
րաներ) մի կողմից և արդյունաբերական անասնապահու-
թյան դերը՝ մյուս կողմից։ Այս իսկ պատճառով պահանջ-
վում ե դաշտային գոտում ամսնաարագ թափով զարկ
տալ դաշտային տեխնիքական կուլտուրաների, արգեգոր-
ծության, պտղաբուծության, բանջարաբուծության, թելի
և սուբտրոպիկ ալլ կուլտուրաների մշակության, իսկ նա-
խալեռնային և լեռնային գոտիներում՝ անասնապահու-
թյան և առաջին հերթին կաթնատնտեսության ու կաթնա-
տու և մսա—բրդատու վոչխարաբուծության։

Անդրկովկասի գլուղատնտեսության զարգացումը՝ ըշ-
ված պայմաններում, պահանջում ե լուրջ ուշադրություն
դարձնել գլուղատնտեսական հումուրիթի վերամշակու-
թյան խնդրին։

Գլուղատնտեսության ինդուստրացման խնդիրները
վոչ միայն նշանակություն ունեն գլուղատնտեսության
արտադրական ուժերի զարգացման ու նրա մեջ ավելի ա-
բագ թափով կուտակումներ կատարելու տեսակետից, այսև
նրանք առանձնակի դեր պիտի խաղան գլուղատնտե-
սության վերակառուցման և նրա սոցիալիստական հի-
մունքներով զարգանալու գործում։

Ինքնին հասկանալի յե, վոր մանր և մանրագույն գլու-
ղացիական տնտեսությունները միանգամայն ի վիճակի
չեն գլուղատնտեսական հումուրիթի վերամշակություն կա-
տարել։ Դրա համար անհրաժեշտ ե առանձին տնտեսու-
թյունների համախմբում, կոլեկտիվիզացիա։

Խ. Հայաստանում և Խ. Վրաստանում պահուի և լուղի
արտադրության բազայով կաթնատնտեսական կոռպերա-
ցիայի ուժեղ զարգացումը, Արխագիայում՝ գինեգործա-
կան կամ ծխախոտագործական կուպերացիայի զարգացումը

—ահա գլուղատնտեսության ինդուստրաց յան բնագավառում կատարված նվաճումների փուլերը:

Մինչև պատերազմը և հեղափոխությունը գործարանային լեզանակով գյուղատնտեսական հումուլյթի արդյունաբերական մշակության ձեռնարկել են սասնավոր խոշոր տնտեսությունները, վորպիսին և լեղել ե նրանց արտոնությունը: Այդպիսի տնտեսություններ ելին վրաստանում նախկին Ռւդենի կարգածքները, Գյանջայում՝ Ֆորըերներն ու Գումեները, Յերևանում՝ Շուստովը, վորոնք իրենց ձեռքն ելին կենտրոնացըրել գինու-կոնյակի արդյունաբերությունը, իսկ Կուչենբախը, Ամմետերն և ուրիշները տաքուկ անկուն ելին ստեղծել Բաշկիչետում ու Լոռում և շվեյցարական պանրի ու յուղի արտադրությունը համարյա իրենց մենաշնորհը դարձրել:

Նրանց հետ միասին գոյություն ունելին նաև միշտը մանր ձեռնարկություններ: Թէ առաջինները և թէ վերջինները վերամշակության հիմնական հումուլյթն ստանում ելին շրջագալքի ազգաբնակությունից, վորոնց անսահմանափակ շահագործողներն ելին հանդիսանում նշված ֆիրմաները-տնտեսությունները:

Գլուղատնտեսական մթերքների վոչ գործարանային մշակությունը, անգամ տնայնագործական յուղագործությունը, ըրինձ մաքրող գործարաններ՝ գինդերը, ջրաղացները և այլն—այդ բոլորը գտնվում ելին տեղական մեծ ու վոքը կուլակների ձեռքում:

Նրանք շահագործում եյին վոչ միայն գյուղի չքավորին, վոր նրանց հավիտենական ստուկն եր, այլև շահագործում ելին միջակին:

Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև բամբակագործության ասպարիզում, վորը մինչև պատերազմը ծաղկած վիճակ ուներ: Առետրական կապիտալն իր բամբակագոտիչ գործարաններով, անգամ ձիթահաններով ցանցել եր բամբակագործական բոլոր շրջանները:

Հեղափոխության ժամանակ չքավոր գլուղացիությունը, վորպես աշխատավորության շահագործման հուշարձաններ, վոչնչացրեց ու հափշտակէց ողեգործարանները, գինեգործարանները, պանրի և յուղի գործարանները, բամբակազտիչ գործարանները, նըանց տեղը թողնելով միայն ծըխացող ավերակներ։

Խորհրդային իշխանությունը շատ բան նորից կառուցեց, ինչպես շամբակազտիչ գործարաններն ու յուղագործարանները, շատ գործարաններն ել հիմնական վերանորոգության յենթարկեց ու նորից սարքավորեց։

Ներկայումս գլուղատնտեսական հումույթի վերամըշակումը կենտրոնացած ե Միության և տեղական ժողովներին տրեստների և գյուղատնտեսական կոռպերացիաների ձեռքում։

Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդականացման հետևանքով գլուղատնտեսական կոռպերացիան ուժեղ թափ ստացավ։ Իր շրջագծի մեջ առնելով չքավորմիջակ գյուղացիության ավելի ու ավելի լայն խավեր, նա արդեն գլուղատնտեսական ինդուստրիայի բնագավառում հանդիսանում ե նշանակալից արտադրող։

Գյուղկոռպերացիան առանձնապես աչքի ընկնող հաջողություններ ունի կաթնատնտեսական արդյունաբերության բնագավառում։

Գյուղատնտեսության հումույթի վերամշակության բնագավառում գործարանային յեղանակով կաթի վերամշակությունն ավելի լայն չափերով ե զարգացած։ Յեթե պատերազմից առաջ Անդրկովկասում գյուղություն ուներ 44 մասնավոր գործարան, վորոնք տարեկան վերամշակում ելին 120,000 ցենտներ կաթ, ապա 1927 թ. գյուղություն ուներ 122 գործարան, վորոնք վերամշակել են 194,240 ցենտեր կաթ։ Վերոհիշյալ 122 գործարանից միայն 3-են մասնավոր (Վրաստանում), մնացածները կենտրոնացած են պետարդյունաբերության մեջ, գլխավորապես գյուղատնտեսական կոռպերացիայի ցանցում։

Ալպյան հարուստ արոտավայրերի ու խոտհարքների ընդարձակ տարածությունները հիմնական նախադրյալներ են հանդիսանում մի կողմից՝ ԱՄֆենէ լեռնալին շըշջաններում կաթնատնտեսության զարգացման համար և մյուս կողմից՝ խոշոր խթան կաթնատնտեսական արդյունաբերության հիմունքներով, վերակազմելու այժմյան երստենսիվ անամնապահությունը:

Պանրա-լուղազործարանները պիտի հանդիսանան այն կենտրոնները, վորոնց շուրջը կոլեկտիվիզացիաի հիմունքներով համախմբվելու յեն անասնապահական տնտեսությունները և լեռնային շրջաններում հացահատիկալին յերերուն տնտեսության փոխարեն ստեղծելու յեն ապրանքային կաթնատեսություն՝ հիմք ունենալով բարձր կաթնատվությամբ ոժտված հոտեր և անցնելով ցանովի խոտերի ու արմատապտուղների մշակության:

Կաթնատնտեսական կոռպերացիալի գարգացման թա-

Աղյուսակ № 4

Տարբերակ		Ազգային բացառություն Բիլլը		Անդամակցություն Բիլլը		Կոոպերատուրայի առաջնահանություն Բիլլը		Պարտավորություն Բիլլը		Պարտավորություն Բիլլը		Պարտավորություն Բիլլը	
1925- 26	72	5,742	14,300	85	58	9,482	220,0	600,0	500	1,000,0	50,0	1,170,0	
1926- 27	81	6,040	17,400	10,0	76	12,133	256	495	55	1,151	—	1,195,0	
1927- 28	81	6,280	288,90	11,1	76	16,700	301	600	82	2,030	307,5	1,688,0	
1928- 29	95	7,600	30,200	—	84	21,200	320	700	100	3,300	374,0	2,069,0	

փըն ըստ առանձին հտնրապետությունների հետեւալ պատկերն ունի.—

ա) Հայաստանի ՍԽՀ (տես աղյուսակ № 4, եջ՝ 28):—

բ) Բացի կոռպերատիվ պանրա-լուղագործարաններից և կաթնատնտեսությունից (քաղաքներին լավորակ կաթ մատակարարող), Խ. Հայաստանում և Խ. Վրաստանում կան նաև պետական գործարաններ, վորոնք Խ. Հայաստանում պատկանում են Գյուղատնտեսական Տրեստին և Վրաստանում՝ Գավգործկոմներին:

Հայաստանի Գյուղատնտեսական Տրեստի Յ գործարանները վերջին յերկու տարում ունեցել են հետևյալ արտադրանքը:—

Աղյուսակ № 5

Տարիներ	Շնորհարանների թվականը		Շվեյցարականին պանիր		Սերի կարագ		Պանրատակի կարագ		Հանրատակի կարագ	
	Քործարանների թվականը	Մասնակիությունների առանձին	Արժեքը համարակալությունը	Քանակը համարակալությունը	Արժեքը համարակալությունը	Քանակը համարակալությունը	Արժեքը համարակալությունը	Քանակը համարակալությունը	Հանգամինը հազար սուբբեներով	Արժեքը համարակալությունը
1926-27	3	51,3	94,9	8,5	15,8	3,1	4,7	115,4		
1928	3	84,4	156,1	17,4	32,1	6,4	8,1	196,3		

Խ. Վրաստանում կաթնատնտեսական կոռպերացիալ աճման թափը մի փոքր թույլ ե. այսպես, --1925-26 թ. տաստեղ կար 44 կաթնատնտեսական արտել 4,014 անդամով, կար 34 արտելալին գործարան (բացի դրանից Յ գործարան շահագործվում են գավգործկոմների տեղական արդյունաբերության բաժնի կողմից), 1926-27 թ. կար արդեն 54 արտել 6 008 անդամով և վերամշակվել ե 7,590 տոնն կաթ՝ 958,700 ռ. արժողությամբ: 1927-28 թ. կաթնատնտեսական արտելների թիվ 40 գործարանից հասնում ե արդեն 76-ի և վերամշակել ե 10,540 տոնն կաթ՝ 1,647,200 ռուբլու արժողությամբ:

Խ. Աղրբեջանում նույնիսկ մինչև պատերազմը կաթի գործարանային արտադրությունը թույլ եր զարգացած. վեց մասնավոր գործարաններն արտադրում եյին ընդամենը 27 տոնն կաթնամթերք:

Ներկայումս այնտեղ վոչ մի գործարան գոյություն չունի և չկա նաև վոչ մի կաթնատնտեսական արտադրական արտել:

Խ. Վրաստանում գործարան ունի Բորչալուլի գավառում. բացի այդ, գործարաններ կառուցում են Դուշեթի և Ախալքալակի գավգործկոմիները: Վերջինս արդեն անցել ե շահագործման, Յուրաքանչյուր գործարան պիտի վերամշակի 830 տոնն կաթ:

Կաթնամթերքների ժամանակակից վերամշակության երական թերությունը՝ գործարանների մեծ մասի վատ սարքավորված լինելն ե, մի հանգամանք, վոր անդրադառնում ե նաև մթերքների վորակի վրա: Այսպես, Խ. Վրաստանն առաջին տեսակի շվեյցարական պանիր տալիս ե ընդամենը 20—30 տոկ., Խ. Հայաստանը, վորտեղ արդեն 1926—27 թ. սկսել են աշխատել 6 նոր գործարաններ, պատրաստվող պանիրի վորակը մի քիչ ավելի բարձր ե:

Հիմնական խնդիր ե հանդիսանում կաթնագործարանների խոշորացումը. փոքր արտելների փոխարեն, մեքենայացված շրջանալին գործարաններ ունենալը: Վորտեղ այդ հնարավորությունները բացակայում են, այնտեղ ել կառուցվելու լեն շրջանալին պանրապահեստներ, ուր պանիրը, վորակյալ վարպետների հսկողությամբ և ոպատմալ պալմաններում կենթարկվեն հետագա հասունացման:

1927—28 թ. Անգրքեղերացիայում պետական ու կոռպերատիվ գործարաններում վերամշակվել ե կովի կաթի ամբողջ արտադրանքի 3,5 տոկոսը:

Այս հնգամյակի նպատակը պետք ե լինի կաթի արդյունաբերությունը զարգացնել այնպես, վոր հնգամյակի վերջում, կաթի ամբողջ արտադրանքի 12 տոկոսը, վոր այդ

ժամանակամիջջոցում զգալիորեն բարձրացած կլինի, — վերամշակութիւն յենթարկվի. Ծրագրվում ե հնդամյակի վերջին զանազան արտադրողականությամբ ունենալ 173 նոր պանրա-յուղագործարան, վորպիսիք ընդունակ լինեն տարեկան արտադրելու 78.000 տոնն մթերք:

Այդ գործարանները կառուցվելու յեն.—

Խ. Աղբքեջանում 54 հատ, 21,800 տոնն արտադր. ունակութ. 12890,0 հաշ.ռ. ար-	
Խ. Հայաստանում 63 » 32,300 » » 3830,0 » »	
Խ. Վրաստանում 56 » 23,900 » » 2890,0 » »	

Գոյություն ունեցող գործարանների հետ նոր կառուցվողների արտադրական ունակությունը կհասնի 110 հաշար տոննի, փոխանակ այժմյան՝ 33,400 տոննի:

Կաթի վերաջակությանց հետո, իր անտեսական նշանակությամբ և գյուղական ազդաբնակության մեջ տարածված լինելու տեսակեալից առաջին տեղը բռնում է գինեգործությունն ու ողեգործությունը:

Մինչպատերազմյան ավյալներով Անդրֆեղերացիայում տարեկան պատրաստվում եր 12,000 դրամ գինի, վորից արածվում եր 3,100 դրամ:

Բացի գինեգործությունից, — խաղողի ջեջից պատրաստում ելին նաև ողի:

Այգեգործության ցածր տեխնիկայի հետեւանքով պրեմիտիվ ե նաև գինեգործությունն ու ողեգործությունը: Սարքավորված գինեգործարան ու նկուղ ունեն Խ. Վրաստանի Ժողովրդական Կալվածների Տրեստը, վորին անցել ե նախկին Ռւդելինի Կալվածքների սարքավորումն, Աղվինը, վորին անցել են Աղբքեջանի գինու ու կոնյակի խոշոր ֆիրմաների (Ֆորեր, Գումել և այլն), ինչպէս նաև Գյանջալի «Կոնկորդիա» խոշոր կոռպերատիվի գուլքը:

Խ. Հայաստանում, աննշան տարողությամբ նկուղներ ունի Գյուղատնտեսական Տրեստը և լավ սարքավորված ե Ժողովական «Արարատ Տրեստի» ողեգործարանն ու կոնյակի գործարանը, վորոնք մնացիլ են Շուլտովից և մի շաբաթ այլ մանր գործարաններից:

Ներկայումս զինև գործության ապրանքային արտադրանքը, նախապատերազման շրջանի համեմատությամբ, զգալիորեն ընկած է:

Ներքին գլխավոր շու կ ների համար համարյա բացառապես աշխատում են վերոհիշյալ տրեստները:

Կոռպերացիայի աստիճանական դարձացման գուգընթաց, նրան պիտի միջոցներ ընձեռել՝ արդյունաբերությունը ծավալելու համար: Այժմ արդեն կոռպերացիան Խ. Աղբեջանում ընդգրկել ե արգեգործական տն տեսությունների 25 տոկոսը և Խ. Հայաստանում 50 տոկոսը: Այդ տեսակետից մի փոքր լեռ ե մնում Խ. Վրաստանը, վորտեղ կոռպերացված արդիների տարածությունը հասնում է 2,457 հեկտարի: արտինքն՝ մոտ 7 տոկոսի: Խ. Վրաստանում այդիների՝ կոռպերացիայի կողմից թույլ ընդգրկված լինելը խոշոր չափերով պիտի բացատրել նրանով, վոր միջոցների բացակայության պատճառով հնարավոր չե սարքավորել գինու վերամշակության համապատասխան ձեռնարկումներ: Ալսպես, Խ. Վրաստանի գյուղատնտեսական կոռպերացիայի նկուղների տարողությունը մոտավորապես հասնում է 50,000 հեկտոլիտրի: Նույն այդ պատճառներով Խ. Հայաստանում (նկուղների, գինեգործարանների, խմորման շենքերի, ամանների բացակայություն) գյուղատնտեսության կոռպերացիայի անդամների 25 տոկոսի արտադրանքն ե միայն անցնում կոռպերացիայի ցանցով: Խ. Աղբեջանում, բացի «Կոնկորդիայից», Էվորի նկուղները 100 տոկոսով ծանրաբեռնված են, մուս ընկերությունները, խոշոր տակառների և այլ սարքավորումների բացակայության աատճռով՝ ծանրաբեռնված են 50—80 տոկոսով:

Մինչդեռ խաղողը ԱՍՖԽՀ բոլոր հանրապետություններում ունի բարձր ալյանքայնություն, վորն այդ տեսակետից թերեւս կարող ե զիջել միայն բամբակին, ծխատութիւն և բոժոժին: Գինու արտածման վերաբերյալ պլոփ. Զելոկալեկի տված տվյալների համաձայն, ալգեգոր-

ծության ամբողջ ապրանքայնությունն ըստ հանրապետությունների հետևյալ պատկերն ունի. —

Խ. Աղբբեշանում հավասար է 79,1 %,	իսկ գինի պատրաստված է 69,1%
Խ. Հայաստանում > 71,8 > > >	> 66,8 >
Խ. Վրաստանում > 50 > > >	> 45,6 >

Այդ տոկունների համապատարխան ել 1927 թ., ըստ առանձին հանրապետությունների, մենք ունենք ամբողջ արտադրանքի ապրանքային քանակը, զոր վերամշակվել ե փորպես գինի, նրա այլ մասերի և ունեցել ե ապրանքային հետևյալ յելքը. —

Աղյօւսակ № 6

Հանրապետություններ	Ընդհանուր արտադրանքը հազար տոններով	Աղբանքային մասսան հազար տոններով	Գինու ապրանքային քանակությունը հազար տոններով
Խ. Աղբբեշան	88,6	61,2	437,5
Խ. Հայաստան	43,1	28,8	200,0
Խ. Վրաստան	156,6	61,2	437,5
ԱՄՖԽՀ-ում	268,8	151,8	1,075,0

Ներկայումս հանրապետություններից և զոչ մեկում ապրանքային գինու այդ քանակությունը նկուղներով ու ամաններով, ինչպես նաև ռացիոնալ կառուցված ու սարքավորված գինեգործարաններով ու խմորման հատուկ շենքերով բավականաչափ ապահովված չե:

Այսպես. —

Աղյօւսակ № 7

Հանրապետություններ	Ընդհանուր արտադրանքը հազար տոններով.	Գոյություն ու արման-շինչի ու արման-հանու գործարաններու արդ.	Շենքեր ու ամեն-առաջարկած հանու գործարաններու արդ.	Գոյություն ու արման-շինչի ու արման-հանու գործարաններու արդ.
Խ. Աղբբեշան	437,5	187,5	250,0	156,2
Խ. Հայաստան	200,0	37,5	162,5	37,5
Խ. Վրաստան	437,5	125,7	308,8	125,0

Վերը բերած թվերն ապացուցում են, վոր անհրաժեշտ ե մոտակա տարիներում այդ արդյունաբերության մեջ ել ավելի ուժեղացնել խոշոր կապիտալների ներդրությունները։

Հնգամյա հեռանկարակին պլանի համաձայն, ի հաշիվ յերկարատև վարկի և ի հաշիվ իրեն՝ արտադրողի —նկուղների պահանջը պիտի բավարարել ընդամենը $\frac{1}{3}$ -ով միայն և ամբողջ տարալի 50-ը միայն անցկացնել կանոնավոր սարքավորված գինեգործների սիջոցով, վորն ԱՄֆԽՀ համար յերկարատև վարկի գծով կպահնջի 9,377,000 ռուբրի։

Ինչպես հայտնի լե գինեգործության մնացորդների (ջեջր) շահագործումը նույնպիս մեծ մասամբ կատարվում ողեգործության միջոցով թորման հասարակ կաթսաներով և մեծ կորուստներ և տալիս։ Ինքնին հասկանալի լե, վոր համալիսացված հատվածը պիտի ունենա ավելի կատարելագործված սարքավորում վորը հնարավորություն կտա թորելու ռակ-իֆիկացիալի համար գնացող կիսաֆարբիկատը, ԱՄֆԽՀ գինեգործական կոռպերացիան այս հնգամյակում պիտի սարքավորի 52 ողեգործարան, յուրաքանչյուրը 675,000 ռ. արժողությամբ, 100,000 տոնն տարօղությամբ և 38,000 տոնն արտադրողականությամբ, իսկ Հայաստանում՝ 3,200 տոնն արտադրողականությամբ և 590,000 ռուբլու արժողությամբ։

Այդ գործարանները պիտի աշխատեն 1929 թ., վորոնք սակաւն քիչ-շատ չափով ամբողջ արտադրանքն ընդգրկելու տեսակետից անբավարար են։

Վերջապես, պիտի ուշադրություն դարձնել խաղողի խտացրած քաղցուց քաղցր, սպիրտից ազատ գինիներ պատրաստելու վրա։

1927 - 28 թ. Խայաստանում պատրաստվել եր մոտ մեկ միլիոն շիշ խաղողի բուժիչ հուկթ, վրը շատ լավ ե սպառվել։ Հայարավորություն կա այն արևելյան յերկները արտահանելու։

Անհրաժեշտ ե, վոր մեր կոռպերացիան դրա համար ձեռք բերի համապատասխան վակում—ապարատներ:

Հնգամյակում, ամբողջ ԱՄՖԽՀ-ում գինեգործության և ողեգործության մեջ դրվելիք կապիտալ ներդրութիւնների գումարը արտահայտվելու ե 12,035,000 ռուբլով:

1927—28 թ. պտղաբուծության և բանջարաբուծության արտադրանքը, գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի նկատմամբ, կազմում եր 4,5 տոկ. և փաստորեն հաշվում են 286 500 տոնն:

Բայ հնգամյա պլանի 1932—33 թ. բանջարաբուծության և պտղաբուծության տարածությունն ու ընդհանուր արտադրանքն ըստ առանձին համբապետությունների՝ հետևյալ պատկերն եւ ունենալու.—

		ԱՄԿՀ	ՀՍԿՀ	ՎՍՀՀ	ԱՍՁԿՀ
1.	Այգիների տարած.	հազ. հեկա.	24,6	7,8	21,9
2.	Ընդհանուր արտադրանքը	հազ. տոնն	98,8	55,3	206,1 *)
3.	Բանջարանոց. տարածութ.	» հեկա.	6,9	6,0	12,0
4.	Ընդհանուր արտադրանքը	» տոնն	95,2	74,3	170,1
					339,6

Տարածության և արտադրանքի աճման հետ միաժամանակ պիտի բարձրանանակ նրանց ապրանքայնությունը, հակառակ դեպքում՝ գյուղատնտեսության արդ ճյուղերի զարգացմանը վտանգ կսպառնա: ԱՄՖԽՀ համար, միջին հաշվով, պտուղների միջին բերքի ապրանքայնության 44 տոկոսը և բանջարեղենների 35 տոկոսը՝ համեմատարար ցածր ե: Մինչդեռ Անդրկովկասը, նրանց զարգացման հայաց՝ ունի բնական և տնտեսական բոլոր նախադրյալները: Անդրկովկասի պտղաբուծական շրջանների պոտենցիալ հընարակությունները գերազանցում են թե Նըիմին և թե Կալիֆորնիալին:

Մեր սակավահողության պայմաններում գյուղատըն-

*) Վ. Խ. Հ. Համար ընդհանուր բերքի մեջ հաշված ե նաև արդիների տարածության մեջ չմտնող առանձին ծառերի արտադրանքը:

տեսության այդ ճյուղերի զարգացումն առանձնապես կարևոր է:

Պտղաբուծության զարգացման համար խոշոր խոչնդուս են հանդիսանում թարմ վիճակում մրգերն սպառելու դըժվարությունները և պտուղներն ու բանջարեղենները վերամշակության յենթարկող փոքրաքանակ ձեռնարկությունները:

Ներկալումս պտղա-բանջարեղենների աբոյունարերությունը հետեւկալ պատկերն ունի.—

Ա.Ս.Խ.Հ.—Պահածոների մեկ գործարան . . . 300 տոնն արտադր. Ընկույզագաղիչ 820 > >

Հ.Ս.Խ.Հ.—Պտղա-պահածոների և բանջարեղ. մեկ գործարան Յերեանում 246 > > >
> Պտղա-պահածոների մեկ գործարան Մեղրիում 60 > >

Վ.Ս.Խ.Հ.—Գորիի պտուղների պահեստ . 1,000 > >
> > պահածոների գործարան 200 > >
Մեկ գործարան պտուղները կրակով չորացնելու 115 > >
Ընկույզագաղիչ մեկ գործարան . . . 800 > >

Այս ձեռնարկությունների ամբողջ արտադրողականությունը կազմում է 3,887 տոնն, այսինքն՝ ընդգրկում են ամբողջ արտադրանքի մոտ 1,2 տոկոսը: Պիտի ասեմ նաև, վոր Խ. Վրաստանի Ժողովնախորհի գըծով Գորիում կառուցվում է պահածոների գործարան:

Հետազոտական և ոբյեկտիվ տվյալների համաձայն, պիտի յենթադրել, վոր 1932—33 թ. ըստ հանրապետությունների նրանց ապրանքայնությունն արտահայտվելու լի:

Աղյուսակ № 8

Հանրտպետություններ	Ապրանքայնության %-ը		Ապրանքային մասսան հազար տոնն.	
	Պառագներ	Բանջարեղեն.	Պառագներ	Բանջարեղեն
Ա. Ս. Խ. Հ.	50,9	50,1	50,0	67,7
Հ. Ս. Խ. Հ.	60,0	59,0	32,2	37,1
Վ. Ս. Խ. Հ.	60,0	50,0	123,7	85,0
Ամբողջ ԱՄՖԽՀ-ում	—	—	200,9	189,8

Նկատի ունենալով տեղաեան խոշոր շուկաները —ինչպես Թիֆլիսը, Բագուն, Յերևանը և Անդրկովկասի մյուս քաղաքները,—պատղաբուծության և բանջարաբուծության ապրանքային ամբողջ մասսայի յելքը դեպի ներքին ու արտաքին շուկաները պիտի համարել մոտավորապես 14 տոկ., այսինքն՝ 1932—33 թ. վերամշակության կենթարկվի ընդհանուր արտադրանքի մոտ 7,75 տոկ., հանդեպ 1927—28 թ. 1,2 տոկոսի:

Ներքին (Միութենական) և արտաքին շուկաները նըկատի ունենալով, անհրաժեշտ ե սարքավորել.—պատուղներ պահելու պահեստներ, վորտեղ պիտի պահվեն ու տեսակավորվեն շուկաներն ուղարկվող պատուղները: Պահածոների գործարան, վորոնց արտադրանքի մի մասը հեշտությամբ կարելի յե արտահանել արտասահման, ինչպես այդ ցուց տվեց Յերևանից — Բերլին ուղարկված պահածոների փորձը: Պաղաչորանոցներ՝ չոր մրգեր ստանալու համար, վորով կվերացվի այն անորմալ դրություննը, վոր վոչ միայն Միության, այլ և ԱՄՖԽՀ շուկաները չոր միքզզ ներմուծվում ե Պարսկաստանից և, վերջապես, ընկույզի և տկողինի համար Աղբբեջանում և Վրաստանում կառուցել ընկույզագտիչ գործարաններ և պահեստ-չորանոցներ:

Առանձին հանրապետությունների արտադրանքը նկատի ունենալով, արդ ձեռնարկությունների խորհրդային տընտեսությունների, կոլտնտեսությունների և գյուղկոոպերացիայի միջև պիտի բաշխվեն հետեւյալ կերպ.—

	Ա. Ս. Խ. Հ.	Հ. Վ. Խ. Հ.	Վ. Ս. Խ. Հ.	Ա. Ա. Ֆ. Խ. Հ.			
1. Պազարանմանինք ա) խոշոր բ) մասն.	8 10 5 8 1 2 2	5,0 5,0 2,5 300,0 460,0 7,5 20 180,0	— 14 2 180,0 100,0 1,5 — — —	8 10 4 4,3 2,0 10 — 5,0 —	— — — 260,0 360,0 9,0 — 450,0 — 7	— 34 11 13,1 4,9 21 — 7,0 7,0	— 16 — 13,1 4,9 18,0 1,2 60,0 680,0
2. Պահածոնմանի գործարք. 3. Պազարանմանինք 4. Բնիսոյզութիւն գործարք. 5. Զուբանց-պահածութանինք ընկալիք և տեղաբնիւն համար.	5 5 8 1 1,2 — —	460,0 466,0 60,0 1,2 60,0 — —	0,4 3 — — — — —	4 150,0 — — — — —	— — — — — — —	— 550,0 — — — — —	920,0 1,156,0 60,0 — — — —
Հնդկանմանինք ա) խոշոր բ) մասն.	— — 13,2 — — — —	— — 1,456,0 — — — —	5,7 480,0 — — — — —	— — 18,3 — — — —	— — 1,620,0 — — — —	— — — — — — —	46,2 3,506,0 — — — — —
Հնդկանմանինք գ) գործառնութիւնով գործառնութիւնութիւն ու հաղորդ և կառուց ցորութիւն կումբինի ընդունութիւն առաջադրու- թան կանոնի ընդունութիւն	— — — — — — —	— — — — — — —	— — — — — — —	— — — — — — —	— — — — — — —	— — — — — — —	— — — — — — —
1932-33 Բ. կայութագործութիւն Հնդկանմանինք	— — 14,3 — —	— — — — —	— — 8,9 — —	— — — — —	— — — — —	— — — — —	— — — — —

Ծխախոտի նախնական վերամշակությունն. — Միասնական պատագործությունը, այսինքն թանգարժեք դեղին ծխախոտի արտադրությունը, ինչպես հայտնի յե, մինչև պատերազմն ել խոշոր չափերով զարգացած եր Արխագիտուր և Խ. Վրաստանի Լագոդեխի և մասամբ Սղնախի գավառներում։ Այժմ այդ կուլտուրան սկսում ե զարգանալ Խ. Աղբբեջանի և Խ. Վաստանի մի շարք վայրերում։ Դեղին ծխախոտի կուլտուրան նշանակություն ունի ինչպես Միության ծխախոտի արդյունաբերության, նույնպես և արտածման համար։ Սակայն ծխախոտագործության բնագավառում, քան վորեե մի այլ բնագավառում, նրա հետագա զարգացումը սերտ կապված ե ծխախոտի նախնական վերամշակության հետ, վորը համարլա պիտի կատարվի նրա արտագրության տեղում։ Միայն կանոնավոր չորացնելու, տեսակավորելու և նախնական ֆերմենտացիալի գեպքում կարելի յե և արդյունաբերության և արտածման համար ստանալ կանոնավոր ապրանք։ 1927—28 թ. Արխագիտության ծխախոտագործական շրջանում կար ֆերմենտացիոն պահեստներ՝ 11.000 տոնն տարողությամբ և Խ. Աղբբեջանում՝ 300 տոնն տարողությունում։ Խ. Հայաստանում՝ 8երեսանում կառուցվում ե նման մի պահեստ 200 տոնն տարողությամբ։

Ծխախոտի ապրանքային մասսան հավասար ե 90 տոկոսի և լեղած ֆերմենտացիոն պահեստներն այսոր հազիվ թե ի վիճակի լինեն ընդգրկելու այդ ամբողջ մասսան։ Վաղվա հերթական խնդիրն ե լինելու՝ կառուցել մի շարք ֆերմենտացիոն պահեստներ, վորպեսզի կարելի լինի ընդգրկել աճող ամբողջ արտադրանքը։ 1927—28 թվի 11,140 տոննի դիմաց, 1928—29 թ. սպասվում ե 11,800 տոնն, իսկ 1932—33 թ.՝ 20,000 տոնն։

Երամապահություն յեկ գենաձի գործ. — ԱՍՖԻՀ ազգաբնակությունը վաղուց իվեր, վորաեղ թթենի յե աճում, պարապում ե շերամապահությամբ։ Դրա հետե-

վանքնով Խ. Վրաստանում և Խ. Աղբբեջանում բավականի խոշոր չափերով զարգացել ե շերամապահության տը. նայնագործական արդյունաբերությունը. Մինչև պատերազմն ել, այն շրջաններում, վորտեղ զարգացած եր շերամապահությունը, գոյություն ունելին մասնավոր մետաքսամանարաններ:

Բոժոժի ապրանքանությունն բավականին բարձր ե (85—90%):

Ա. Ս. Խ. Հ. 1927/28 թ. ընդհանուր արտադրանքը հավասար եր 2,000 տոննի
--

Հ. Ս. Խ. Հ. > > > > 100 >

Վ. Ս. Խ. Հ. > > > > 10,000 >

Ընդամենը Ա. Ս. Ֆ. Խ. Հ. 4,100 տոննի

Գյուղատնտեսության հնգամյա պլանի համաձայն, նախատեսվում ե զարկ տալ շերամապահության հետագա զարգացմանը, վորի համար Անդրկովկասի ալգեգործական շրջաններն ունեն բոլոր բարենպաստ պալմանները:

Խոշոր չափերով կլանելով կանանց ու լեռեխաների աշխատանքը, բանվորական ձեռքեր պահանջելով գյուղատնտեսական մլուս աշխատանքներից ավելի ազատ սեղոնում, և գարնան վերջին, գյուղատնտեսական ժամանակի տեսակետից, տալով առաջին բերքը,—այս բոլոր հանգամանքները նկատի ունենալով, պիտի ամեն կերպ խրախուսել գյուղատնտեսության այդ ճյուղը: Զխոսելով մեր արդյունաբերության պահանջների մասին, բոժոժն ու մետաքսը հանդիսանում են նաև մշտական ու վատահելի արտածման ապրանք:

Արտադրության աճումը (1932—33 թ. սպասվում ե 11,100 տոնն բոժոժ) առաջադրում է ստացված հումուզի վերամշակության խնդիրը: Այենաձեռնտուն թե ներքին և թե արտաքին շուկաներն արտահանելու համար հանդիսանում ե բոժոժից քաշած թելը: Գոյություն ունեցող մետաքսամանարաններն այսօր իսկ անկարող են ամբողջ ապրանքալին մասսան վերամշակել: Անդրկովկա-

աի ժողանտխորհի և առանձին հանրապետությունների առաջ ծառանում ե մետաքսամանարանների ցանցի ընդարձակման խնդիրը:

Սակայն հումույթի նախնական վերամշակությունը կատարվում է տեղում, ուստի լավագույն ապրանք ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել այն ձեռնարկությունները, վորոնք կնպաստեն այդպիսին ստանալու նախնական այդպիսի վերամշակության միջոցներն են՝ բոժոժ մեռցնելն ու չորացնելը, վորը մետաքսամշակությամբ զբաղվողները կատարում են արևով, վորն և ազդում ե բոժոժի վրակի վրա։ Արհեստականորեն մեռցնելու շենքեր և չորանոցներ գոյություն ունեն Խ. Վրաստանում, իսկ Խ. Աղբյեցանում և Խ. Հայաստանում՝ չկան։

Մեր կոռպերացիալի խնդիրը պիտի լինի—շահագրգուգած արդյունաբերության ոգնությամբ այնպես կազմակերպել ու սարքավորել բոժոժ մեռցնելու և չորացնելու շենքերը, վոր շերամապահության ամբողջ արտադրանքն նրա միջոցով անցնի։ Բաժո՞ժի չորանոցներին զուգընթաց պիտի կառուցվեն պահեստներ, վորտեղ ընդունվող չոր բոժոժներն ըստ ստանդարտի տեսակավորվեն, ծրարվեն ու պահվեն։

Շերամապահության զարգացումն անհրաժեշտ է դարձնում շերամապահներին լավորակ սերմեր մատակարելու խնդիրը։

Այս բնագավառում, խորհրդայնացման տարիների ընթացքում մեծ նվաճություն են կատարված։ Նախապատերազմիան շրջանի դրություն հակառակ, մենք այժմ շերամապահներին 100 տոկոսով մատակարարում ենք տեղական գրենա։ Մինչդեռ առաջներում նրանք բացառապես սպառում եյին արտասահմանից ներմուծվող գրենա, իսկ գրենալի տեղական արտադրությունը հազիվ միքանի հարյուր տուփի յեր հասնում։

Խ. Վրաստանի ժողանտխորհի գրենալի գործարան-

ների տեղական արտադրությունը հասնում է 100,000 տուփի, նույնն է նաև Խ. Աղրբեջանում:

Ինչ վերաբերում է Խ. Հայաստանին, ապա այստեղ զրենալի տեղական արտադրությունը գոչ միայն լիովին բավարարում է ներքին շուկային, այլ և մեծ քանակությամբ արտահանվում է Պարսկաստան, ուր յեզրոպական գրենան սպառվում է մոտ 250,000 տուփի չափ, վորը, մինչեւ ալժմ տրամանցիկ կերպով անցնում եր ԱՄՖԽՀ վրայով:

Գլուղատնտ. հումուզի նախնական վերամշակության մի շարք ձեռնարկումները, վորոնց մասին վերը հիշատակեցի, ապացուցում են, վոր այսուամենայնիվ գյուղատնտ. արտադրանքի տակավին ամենաչնչին մասն ե վերամշակվում, հետեապես և հանդիսանում է ներքին և արտաքին գլխավոր շուկաների ապրանք: Այդ տեսակետից բացառություն ե կազմում բամբակը, վորի ամբողջ հնդավոր մասսան հենց Անդրկովկասում մտնում ե բամբակագտիչ գործարանները, իսկ հունդը (սերմը) բացառությամբ սերմացվեց, ալստեղ վերամշակվում է վորպես ձեթ և ժմիխ:

Մինչդեռ գլուղատնտեսության մի շարք ճյուղեր, վորոնք ունեն բոլոր բարեհաջող պալմանները, միայն այն դեպքում կարող են մեզ մոտ իրոք զարգանալ, յեթե վորոշ չափով կենթարկվեն վերամշակության:

Միքանի կուլտուրամների զարգացումը զգալիորեն կամ բացառապես կախված է նրանց վերամշակության յենթարկող ձեռնարկումներից, վորն ինքնին, բացի շահից, հիմնական մոմենտ են հանդիսանում ինշպես ամբողջ տնտեսության վերակազմության համար, նույնպես և ինտենսիֆիկացիայի ազդակ հանդիսանում՝ տնտեսության մյուս ճյուղերի և ամբողջական տնտեսության համար:

Ալսպես, շաքարաճակնդեղի կուլտուրայի զարգացումը Վրաստանում՝ Գորիի գավառում և Հայաստանում՝ Լեռնինականի գավառում, հնարավոր ե միայն ալդ գավառ-

ներում շաքարի գործարաններ ունենալու դեպքում։ Միենույն ժամանակ շաքարաճակնդեղի կուլտուրան մի ամբողջ հեղափոխություն կմտցնի ցանքաշրջանառության մեջ՝ իրեն հաջորդող հացահատիկալին կուլտուրաների վրա, կրարելավի հողի ֆիզիքական հատկությունները, իր մասցորդներով կերի մի նոր աղբյուր կդառնա և մսացու անասուններ կերակրելու տնտեսության մի նոր ճյուղ կստեղծվի։ Այս չենք խոսում այն մասին, վոր դրանով կընդարձակվի աշխատանքի շուկան։

Նույն տվյալներն ունի նաև կարտոֆիլի կուլտուրան, վորի մշակության համար առանձին լեռնալին շըրջաններն ունեն բոլոր նախադրյալները, վորտեղ կարտոֆիլը ինչպես ցանքաշրջանառության, նույնպես և վորպես կերամթերք կարեոր եւ Սակալն թարմ վիճակում այն արտահանելու հնարավորությունների բացակայությունը սահմանափակում եւ նրա մշակությունը։ Վրաստանում և Հայաստանում կարտոֆիլա-պոտոկի արտադրությունը խթան կհանդիսանա այդ կուլտուրավի զարգացման։

Վրաստանում մասնավորապես և մոտիկ ապագայում նաև Հայաստանում՝ անասնապահության բնագավառի հերթական խնդիրը հանդիսանալու յեւ խոզի մսի (լերշիկա-պուխտալին գործարան) վերամշակության ձեռնարկումը։ Անասնապահական տնտեսության զարգացման հետևանքով, նրա թափուկներով պիտի զարկ տալ խոզաբուծության։ Վերջապես, տեղական լուրահատուկ պայմանները որինակ՝ Վրաստանի արևմտյան շրջանը դարձրել են արդյունաբերական խոզաբուծության շրջան։ Սակալն, յերշիկա-ապուխտալին գործարանի հիմումը միայն կարող եապահովել այդ բնագավառի բարելավումն ու նրա արտադրանքի մշտական սպառումը։ Վրաստանում ալդպիսի գործարանի հիմումը ամսական ապահովված եւ 3000-դուխ հումույթով։ 1930—31 թ. Հայաստանում նման

գործարանը կարող ե ընդունել ամսական 700 գլուխ։ Յերշիկա-ապուխտալին գործարանները մեր տեղական խողաբուծության արտադրանքները կմատակարարեն վոչ միայն Միության խոշոր գործարաններին, այլև արտածման համար լավ կոնտինգենտ կհանդիսանան։

Մեր տնտեսության մյուս ոժանդակ ճյուղը, վոր արտածման լայն հնարավորություններ ունի — թուչնաբուծությունն եւ։ Մինչև պատերազմը Անդրկովկասից արտահանվող 73,740 ֆութ ձվից 52,136 ֆութը գնում եր արտաքին շուկաները։ Պատերազմից հետո տնտեսական կլանքի ընդհանուր փլուզումի հետևանքով, ձվի արտածումը միանգամայն վերացավ և այժ ե, վոր սկսել ե վերակենդանանալ։

1926 թ. Վրաստանից արտահանվել ե ընդամենը 8157 ֆութ ձու, վորի 50 տոկոսը արտածվել ե արտաքին շուկա։

Թուչնաբուծության վրա պիտի դարձնել հատուկ ուշադրություն, վորի ապրանքանությունը բարձրանում ե չքաղորական տնտեսություններում, և պիտի ստեղծվեն այնպիսի ձեռնարկություններ, վորոնք կհեշտացնեն թըռչունների ու ձվի սպառումը, և առանձնապես կնպաստեն նրանց պատրաստելուն՝ արտաքին և ներքին շուկաներն արտածելու համար։ Ուստի, մորթած թուչուններ ու ձվեր պահելու համար պիտի կառուցվեն արտածվող մթերքների սառցարան-պահեստներ։ Զվեր ընդունելու և տեսակավորելու պահեստներ, թուչուններին կերակրելու կայաններ և փետուրներ վերամշակող գործարաններ։

Այս ձեռնարկումները նշված են գլուղատնտեսության հնդամյա պլանում։ Հայաստանում, Յերենովկայի սառցարանային կոմբինատին կից արդեն ստեղծվում ե թուչուններ կերակրելու տնտեսություն։

Ա.Ս.Ֆիօչ արդյունաբերական թուչնաբուծական ձեռնարկումները հնդամյակում կպահանջեն 1,436,000 ու.

կապիտալ ներդրումներ, իսկ լեռշիկա-ապուխտալին գործարանները՝ 1.790.000 ռ. կապիտալ ներդրումներ:

Ինչպես հայտնի յե, բացի խոշոր լեղջերավոր անասուններից, ԱՄՖԽՀ անասնապահության մյուս խոշոր ճյուղը հանդիսանում է վոչխարաբուծությունը, վորի ինդուստրացման բնագավառում մինչև այժմ նույնպես վոշինչ չունենք:

Վոչխարը կարող է տալ շուկայական մեծ արժեք ներկայացնող պանրի տեսակներ, ինչպես որինակ ռուկ-ֆոր» պանիր, վորպիսին մենք չունենք: Այս բնագավառում մենք սահմանափակվում ենք տնային պրիմիտիվ ձևերով տեղական պանիրներ պատրաստելով:

Անհրաժեշտ է կանոնավոր հիմքերի վրա դնել այդ արտադրությունը, վորը մեզ համար արտածման նոր հընարավորություններ կստեղծի:

Բրդի գործվածքների գործարաններ կառուցելու հետեանքով, նույնպես անհրաժեշտ են դառնում բուրդ լը-վանալու ու մաքրելու ձեռնարկումները:

Բրդի գործարանային լվացումների ձեռնարկություններն այժմ առանձնապես անհրաժեշտ են դառնում, յերբ մեր արդյունաբերության շահերը պահանջում են զարկ տալ մերինոս վոչխարաբուծության և տրամախաչման միջոցով լավացնել մեր տեղական վոչխարների բուրդը: Վոչխարաբուծության վերաբերյալ ձեռնարկումները նշված են հնգամյա պլանում, վորոնց համար կպահանջվի 578.500 ռ. կապիտալ ներդրումներ:

Գյուղատնտեսության ինդուստրացումը չպիտի սահմանափակվի միայն այն ճյուղերով, վորոնք ունեն ապրանքալին բարձր յելք, կամ նրանց չպիտի նայել լայն շուկայի տեսակետից:

Հանրախացված հատվածի գծով այնպիսի հումույթների վերամշակման կադմակերպումը, ինչպիսին են հացահատիկների (ալրադացների արտադրությունը), կամ կտա-

վատի և քունջութի սերմերինը (ձեթի արտադրությունը) իրենց հերթին կկարգավորեն Անդրկովկասի ախալիսի ղեփիցիային մթերքների դրությունը, ինչպիսիք են՝ հացնու ճարպը:

Գոյություն ունեցող ջրաղացները և ձիթահան գործարանները շատ են պրիմիտիվ, տալիս են վատ մթերք և մեծ կորուստ:

Կոլտնտեսությունների, խորտնտեսությունների և կոռպակերացիալի գծով, կենտրոններից հեռու ընկած շրջաններում ավելի կատարելագործված ջրաղացների և ձիթահանների կառուցումը հնարավորություն կտան բարելավելու մթերքի վորակը, բարձրացնելու նրա բանակը և եժանացնելու արժեքը:

Ծրագրված են հնգամյակի ընթացքում կառուցել 21 ջրաղաց, յուրաքանչյուրը 200 տոնն արտադրողականությամբ, վորի համար կպահանջվի 525,000 ռ.մ. Աղբբեջանում և Խ. Հալաստանում կառուցվելու յին մեկական ձիթահան, յուրաքանչյուրը 30,000 ռ. արժողությամբ:

Խ. Աղբբեջանում 150,000 հեկտար չալթուկի ցանքաբերի պահակառութիւնում տարածությունը մեր առաջ հարցե գնումը ընդարձակել չալթուկավերամշակող ձեռնարկումները. Ծրագրված են կառուցել չալթուկ մաքրող 8 գործարան և, բինձ ծեծող 5 գործարան, վարոնք կընդգրկեն բրինձի ապրանքալին ամբողջ մասսան: Այդ ձեռնարկումների համար հնգամյակում կպահանջվի 570,000 ռուբլի:

Նույնիսկ ախալիսի վոչ թանգարժեք ձեռնարկումներ, ինչպիսին են աղիքամշակության գործարանների ընդարձակվելն ու մեծանալը, մեզ հնարավորություն կընձեռի լայն չափով ոգտագործել գյուղատնտեսության թափուկները, մեծացնել մեր արտահանությունն ու նրա հաշվին մեծացնել արտասահմանլան անհրաժեշտ սարքավորման ներմուծումը: Աղիքների վերամշակության հա-

մար այս հնգամյակում կառուցվելու յեն 40 գործարան, յուրաքանչյուրը 50.000 կազ հում-աղած աղիքի արտադրողականությամբ։ Նրանց ընդհանուր արժեքը լինելու յե 600.000 ռուբլի։

Խ. Վրաստանում և մասնավորապես Խ. Աղրբեջանում սկսված ե կենաֆի մշակությունը, վորն այնքան անհրաժեշտ ե մեր Միության արդյունաբերության համար։ Այս հանգամանքը մեզ առաջարկում ե նրա նախական վերամշակության համար հանապատասխան ձեռնարկումներ հիմնել, ինչպես թրմոցներ, կեղևաթաղանդ մաշկող շենքեր և կեղևաթաղանթը վերամշակող գործարաններ։ Այդ ձեռնարկումների համար նախատեսված ե «Կենաֆ» ընկերությանը բաց թողնել 1.719.000 ռուբլի։

Վերջապես թեյի մշակության զարգացման հետևանքով պիտի հիշատակել նաև Աջարիստանում թեյի գործարան հիմնելը, վոր զգալիորեն կթեթեացնե արտաքին շուկալից մեր կախված լինելը։ Միայն այս հնգամյակում «Վրաստան Թեյ» ակցիոնարական ընկերության՝ թեյի արդյունաբերության համար կապիտալ ներդրումներ նախատեսվում ե 11.340.000 ռուբլի։

Այսպիսով, այս հնգամյակում գոյություն ունեցող ձեռնարկումների ընդարձակելը և նորերի ստեղծելը պահանջելու են 51,476.000 ռուբլու կապիտալ ներդրումներ, վորից 32.780.500 ռ. արվելու յե յերկարատես վարկի գծով, իսկ մնացածը հոգացվելու յե իրեն՝ արդյունաբերության միջոցներից։

Գյուղատնտեսության ինդուստրացման խնդիրները խոշոր դեր են խաղում և դրա հետևանքով բարձրանում ե նաև Ա.Սֆինչ ժողովրդատնտեսության ամբողջ արտադրանքի տեսակաբար կշիռը։ Այսպես, Ա.Սֆինչ գյուղատնտեսության ապրանքային արտադրանքը, 1926—27 թ. անփոփոխ գներով՝ 1927—28 թ. միջին բերքատվության պայմաններում, գնահատվում ե 164,7 միլիոն ռուբլի, վո-

ըս կազմում ե ամբողջ ժողովրդատնտեսության ապրանքային արտադրանքի 23,2 տոկոսը՝ 1932—33 թ., ապրանքային արտադրանքը պիտի աճի մինչև 373,6 միլիոն ռուբլով և կազմի ժողովրդատնտեսության ամբողջ ապրանքային արտադրանքի 23,6 տոկոսը՝ Մինչդեռ արդյունաբերությունը, վորի տեսակաբար կշփոք 1927—28 թ. 53,3 տոկոս եր, 1932—32 թ. պիտի ունենա 53,0 տոկոսանց Ազնեվթի:

Ազնեվթը, վորի տեսակաբար կշփոք 1927—28 թ. 23,5 տոկոս եր, 1932—33 թ. պիտի գնահատվի 23,4 տոկոս, այսինքն՝ հնգամյակում ել բացարձակ և հարաբերական կերպով ԱԾՖԽՀ ժողովրդատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ պիտի աճի գլուղատնտեսական արտադրանքի դերը:

Այս բոլոր ձեռնարկումները, վոր յես թվեցի իմ զեկուցման մեջ, յեթե կիրառվեն, իսկ յես չեմ կասկածում, վոր նրանք կկիրառվեն անքանին մեջ մեծ զարկ տված կլինենք մեր յերկրի արդյունաբերությանն ու ինդուստրացմանը: (Մափանակարգություններ):



18.	Հ. Ազարյան.—Գյուղատնտեսական բանվորութ.	
	և միջազգ. կոմմոննիստական շարժումը (սպառ.)	40 >
19.	Կ. Խան-Ազարյան.—Ռողեցուց արդյունավետ խոզա- րուծության (սպառվ.)	15 >
20.	Ֆերդինանդով.՝ Հավաքուժ. և նրա ոգուտն. (սպ.)	20 >
21.	Ս. Դանելքեզ.՝ Լավ ե ուշ, քան յերբեք (ազրո- պիլես) (սպառված)	20 >
22.	Կ. Կ. Մինիք-Շահնազարյան.—Կտավատը և կա- նեփը (սպառ.)	20 >
23.	Ս. Լուկասին.՝ Անդրկովկասի տնտեսական դրու- թյունը (սպառ.)	15 >
24.	Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետուրյան անառներից Փայտեղեն բաց բազելու համար (պաշտոնական)	
25.	Պրան. Ավ. Քալանքուր.՝ Կաթնառու կովի կերպից.	30 >
26.	Ս. Ա. Երիթոնով.՝ Խնչու պետք ե ցելը շուտ անել	15 >
27.	Ս. Բակունց.՝ Գալուստի վիկը (ազրո-պատմվածք)	15 >
28.	Ս. Բակունց.՝ Կարտոֆիլի մշակությունը	20 >
29.	Լ. Սուբբոսին.՝ Կովի դատը (ազրո-պիյծս)	20 >
30.	Կ. Կ. Մինիք-Շահնազարյան.—Տիզկանեփ (սպառ.)	5 >
31.	Խ. Ցեր-Ներսիսյան.—Գյուղատու ծառերի ֆնասա- տուներն ու հիվանդությունները (սպառվ.)	25 >
32.	Խ. Ավգալիքելյան.—Գյուղի հողաշինարարութ.	20 >
33.	Արագի.՝ Տրակադրը (ազրո-պատմվածք)	15 >
34.	Յալացի.՝ Առյինդավոր արտունչներ ազրո-զրուց	15 >
35.	Խենկո-Ազեր.՝ Գյուղատնտանանարույծը և իր ազրո-զրուցը	20 >
36.	Ս. Շրիգոլին.՝ Տասը պատգամ անասնապահին (Բ. տպագր.)	20 >
37.	Մ. Խանջանյան.—Մեղքաբժության գործնական ձեռնարկ (սպառված)	60 >
38.	Արամյան Ցերգնելյան.—Մեր գյուղատնտեսու- թյան հերթական խնդիրներից (սպառված)	40 >
39.	Ս. Արթոնյան.՝ Գոյթան, թե արոր (սպառ.)	10 կ.
40.	Վ. Բոյկով.՝ Այծն աղքատի կոմի ե (սպառված)	20 >
41.	Խ. Ցեր-Ներսիսյան.՝ Գոմաղը	20 >
42.	Կ. Կուգնեցով.՝ Լենինը և գյուղացիությունը	30 >
43.	Ա. Մուօւելյան.՝ Անտառը պիտք ե հաշվով կտրել	5 >
44.	Խ. Ցեր-Ներսիսյան.՝ Խնչպիս պատվաստել պըտ- ղատու ծառերը	10 >
45.	Ս. Բակունց.՝ Խոտորջուրի կոմունան	30 >

46. Հ. Ազայան.—Յեռադաշտից դեպի սոցիալիզմ՝
կոռպերացիալի վրայով 1 ռ. 50 »
47. Գ. Ս. Միթաղով.—Տավարի վարակիչ հիվանդու-
թլունները 5 »
48. Մ. Թումանյան.—Վիկ 25 »
49. Պ. Քալանքարյան.—Գումադր 5 »
50. Նոյեմբերի ճանապարհին (ժողով.) (սպառ.) 20 »
51. Գրո. Ավ. Քալանքարյան.—Կաթնառատ կովի ընտ-
րութլունը և նախիրի ազնվացումը 20 »
52. Հրահանդ գյուղատնտ. կոռպերատիվ ընկերութ.
տոմարագրելու կարգի մասին (հավեֆիլուզ. եյանքար) 20 »
53. ԽԾՀՄ. Հոգովազուցնության յել հոգածնարե-
րության բնգիտանուր երմանները 20 »
54. Հ. Փիրումյան.—Հողժողկոմատի 1927/28 թ. գոր-
ծունելութլունը
55. Ա. Արամայան.—Դեպի բերքի բարձրացում
56. Գ. Պ. Դոբրինին.—Զիլերի արհեստական բեղմնա-
վարումը 25 »
57. Ա. Գերմիօյան.—Պաղատու ալգին ու նրա խնամքը 45 »
58. Ա. Մարգարյան.—Վոչխարարուծութլուն 50 »
59. Ա. Ա. յել Ա. Թուրքիայան Բանջարաբուծություն 20 »
60. Ա. Թուրքիայան.—ԱՍՖԻՀ-ի անասնապահութլունը
և գյուղատնտ. ինդուստրացումը 25 »

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ի Շեր-Ներսիսյան.—Խնչպես մշակել խաղողի ալգի-
ները (Բ. տպագր.)
2. Ա. Առանցյան.—Մեղվապահի ուղեցուցից
3. Պ. Քալանքարյան.—Բերքի բարձրացման խնդիրներ
4. Ար. Խառհակյան.—Հանրամատչիլի զրուցներ գինե-
գործութ. մասին

ԴՆՄԾԱՌ Շերեգան, Հողժողկոմատ՝ Հրատարակչության:
Հայգրքի կենտրոնական յել գավառական գրա-
խանութներին, Գավիռողաժիններին:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008281

A 18997

ԱՐԵԿ
ՕՐԻՆԱԿ